

2478

1905 p.  
գոռապիտակաւ և  
կար...

3(47)

5-85

1930




aw

# 1905

## ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ)



9(47)  
5-85

ԽԱՅՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ 1930

17)  
85

24 JAN 2006  
30 MAY 2011

Դ. ԵՂԴԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
Մ. Կ. Ե. Ն. 3/5 3

1905-1907

Գ Յ ՈՒՂԱ Ց Ի Ա Կ Ա Ն

Պ Ա Տ Ե Ր Ա Զ Մ Ը

(Յ Ե Ղ Ա Փ ՈՒ Խ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը)

Türkmenistan  
DEVLET  
Kitap bazarı  
22  
Туркменская  
Книжная бazaar

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ 1930

Թարգմ. Ս. Համայան



42656-63

Главлит № А—64835

Заказ № 1316

Тираж 4000

Книжн. ф-ка Центриздата Народов СССР. Москва, Шлюзовая наб., 10

I. «ԱՄԲՈՂՋ ՇՈՂԸ» — «ԱՄԲՈՂՋ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ»

1905 — 1907 թվերի հեղափոխությունը ըստ իր շարժիչ ուժերի, բանվորա-գյուղացիական հեղափոխություն էր, բանվորների ու գյուղացիների հեղափոխություն էր: Յերկաթուղիների պողպատե գծերի վրա, անվեհեր մարտիկների արյունով ներկված Լոռաի ու Մոսկվայի փողոցներում, առաջին անգամ ցարիզմից կորզված, ապստամբության կարմիր դրոշը բարձրացրած ռազմանավերի վրա, Մերձփոլզյան շրջանի և Ուկրայինայի լայնածավալ դաշտերում, — ամենուրեք, ուր զգացվում էր իսկական հեղափոխության շունչը, նրա արարիչներն էին բանվորներն ու գյուղացիները, վոր ծառայել էին միահեծանության դեմ: Սակայն, յուր սոցիալական բովանդակությամբ 1905 — 1907 թվերի հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն էր: Տապալել կապիտալիստական իշխանությունը, հաստատել պրոլետարիատի դիկտատուրան ու ապա կառուցել սոցիալիստական հասարակակարգ — սա յե սոցիալիստական հեղափոխության նպատակը: 1905 թվի հեղափոխությունը այլ բովանդակություն ուներ:

Բանվորներն ու գյուղացիները ուզում «Բարե չսալ էյին նախ և առաջ արմատախիլ անել միագոյուրյունը — պետությունը, վոչնչացնել ճորտատիրական չսանջվել» լատիֆունդիաները (խոշոր կալվածները) և վերացնել բոլոր խոչնդոտները նոր հասարակակարգի կառուցման ճամբից, հասարակակարգի, վոր մաքրված պետք է լիներ ֆեոդալականության ու դասակարգայնության

կապանքներին: Հեղափոխութեան շնորհիվ պետք է ստեղծ-  
վեր այնպիսի գյուղացիութիւն, վորը ընդունակ լիներ «իր  
գոյութիւնը քարշ չտալու, չտանջվելու հողի վրա, այլ  
զարգացնելու արտադրողական ուժերը, առաջ մղելու գյու-  
ղատնտեսական կուլտուրան» (Լենին):

Գյուղացիութիւնը կռվում էր նախ և առաջ կալվա-  
ծատիրոջ դեմ ու ցարի, իբրև առաջին կալվածատիրոջ ու  
կիսաճորտատիրական միապետութեան գլխավորի:

«Ի՞նչ է ուզում գյուղացիութիւնը հեղափոխութիւն-  
նից» — հարցնում էր Լենինը, — գյուղացիութիւնը ուզում  
է հող և ազատութիւն: Այդ մասին չի կարող յերկու կար-  
ծիք լինել... «Ամբողջ հողը» — դա նշանակում է չբաժա-  
րարվել վոչ մի մասնավոր զիջումով ու վողորմութիւնով,  
դա նշանակում է սպասել վոչ թե գյուղացիների ու կալ-  
վածատերերի փոխադարձ համաձայնութեանը, այլ կալ-  
վածատիրական հողային սեփականութեան վոչնչացմանը...  
«Ամբողջ ազատութիւնը»-ը — դա նշանակում է չինով-  
նիկների և պետական ու հասարակական գործերը վարող  
պաշտոնյաների ընտրողականութիւնը: «Ամբողջ ազատու-  
թիւնը» — դա նշանակում է բոլորովին վոչնչացնել այն-  
պիսի պետական իշխանութիւնը, վորը կախում չունի  
ամբողջովին ու բացառապէս ժողովրդից, վորը ընտրված  
չէ ժողովրդի կողմից, հաշվետու չէ ժողովրդի առաջ, չի  
կարող փոփոխվել ժողովրդի կողմից: «Ամբողջ ազատու-  
թիւնը» — դա նշանակում է, վոր վոչ թե ժողովուրդը  
պետք է հպատակվի չինովնիկներին, այլ չինովնիկները  
պետք է յենթարկվեն ժողովրդին»:

Պետք էր ճամբից վտարել գյուղացու-  
Տգրուկ կալվա-  
ծատիրոջ դեմ մարմինն կպած տգրուկ-կալվածատիրոջը,  
վորի տնտեսութիւնը, ճորտատիրութեան  
մնացորդների շնորհիվ, ընդհանուր առմամբ չափազանց  
յետաձայն էր, առանձին դեպքերում նույնիսկ ավելի յետա-  
մնաց, քան գյուղացիական տնտեսութիւնը:

Կալվածատերը գործադրում էր հողերի մշակման  
գլխավորապէս այնպիսի սիստեմ, վոր չէր պահանջում  
նրանից միջոցներ ներդնել հողի մեջ, չէր պահանջում  
ծախսեր: Նա սովորաբար խուսափում էր այն ոխակից,  
վոր կապված է գյուղատնտեսութիւնը կապիտալիստական  
սիստեմով վարելու հետ: Կալվածատիրական այն հողերի  
վրա, ուր գործադրվում էյին այսպէս կոչված «ոտրաբոտ-  
կաները» և «խսպոլշչինան»\*, բերքը սովորաբար չափազանց  
ցածր էր լինում:

Կալվածատիրական տնտեսութիւնը խճողում էր գյու-  
ղացուն բազմաթիվ պարտավորութիւններէ ցանցով: Այդ  
ցանցի մեջ գյուղացին տանջվում էր, ինչպէս ճանճը  
սարդի ձեռքին:

Միայն «ոտրաբոտկա»-ներով ու «խս-  
վախսառույս-  
կան կապալ  
ղացիական տնտեսութեան շահագործումը  
կալվածատիրոջ կողմից: Դրանց կողքին կանգնած էր վաշ-  
խառույի կապալը: 1861 թվից մինչև 1890 թ. կապալագինը

\* «Ոտրաբոտկա»-ների ելութիւնը կայանում է նրանում,  
վոր կալվածատերերի հողերը մշակում են գյուղացիները իրենց  
ինվենտարով և վարձը ստանում են մասամբ փողով և մա-  
սամբ մթերքով (հողակտորներով, ձմեռվան վարկով և այլն):  
«Իսպոլշչինա» կոչված տնտեսական ձևը «ոտրաբոտկա»-ների  
տեսակներից մեկն է: Կալվածատիրական այս ձևի տնտեսու-  
թեան համար անհրաժեշտ է հողաբաժնով ոժտված գյուղացի,  
վորը ունի թեկուզ շատ վատ կենդանի ու անշունչ ինվենտար.  
անհրաժեշտ է նաև, վոր այդ գյուղացին ճնշված լինի կարիքից  
ու պատրաստ—լծի. տակ անցնելու: Ազատ վարձառութեան փո-  
խարեն—լուծ. սա յե այդ սիստեմի անխուսափելի ուղեկիցը: Կալ-  
վածատերը այս դեպքում հրապարակ է գալիս վոչ իբրև ձեռնար-  
կող-կապիտալիստ, վոր ունի փող ու աշխատանքի բոլոր գոր-  
ծիքները: Կալվածատերը այստեղ հրապարակ է գալիս իբրև  
վաշխառու, վոր ոգտվում է հարևան գյուղացու կարիքից ու  
ձեռք բերում նրա աշխատանքը յերեք անգամ պակաս գնով»  
(Լենին, IX հատոր, I հրատարակ., էջ 614):

ամբողջ յերկրում բարձրացավ միջին հաշվով մինչև 300%, իսկ մի քանի սակավահող շրջաններում 500 և նույնիսկ 1000%-ով: Թեթև վաստակի հնարավորութիւնը ստիպում էր շատ կալվածատերերի կապալով տալ իրենց հողերը զրանց կարիքը զգացող գյուղացիութեանը ու առանց վորևէ ծախսի ու աշխատանքի ստանալ իրենց կալվածներից վաշխառույական յեկամուտներ:

Բացի զրանից, կալվածատիրական դասակարգը լայնորեն ոգտագործում էր իրազրութեան առավելութիւնները և, իրապեստական իշխանութեան վրա հենվելով, նրա ոգնութեամբ գյուղացիական յեկամուտները իր զրպանն էր քաշում: 1885 թվին հիմնված ազնվականների բանկը գլխավոր գործիքներից մեկն էր այն ֆինանսական գործարկումներին, վոր ուղղված էին դեպի կալվածատիրական հողատիրութեան ամբացումը բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով: 1886 թվից մինչև 1892 թ. — այսինքն հինգ տարվա ընթացքում կալվածատերերը ստացել են ազնվականների բանկի միջոցով 310 միլիոն ուրբլու զանազան վարկեր, այնինչ նախընթաց 25 տարվա ընթացքում բոլոր մյուս բանկերը միասին բաց էին թողել կալվածատերերին մոտավորապես նույն գումարը — 306 միլիոն ուրբլի: Սակայն այդ պորտաբույժ դասակարգը, վոր պատմութեան կողմից դատապարտված էր վոչնչացվելու, դժվար էր վերջնականապես փրկել — կարելի չէր միայն մի քիչ յետաձգել նրա կորստի ժամը: Ազնվականութիւնը շարունակում էր պինդ կառչել իշխանութեանը, բայց միևնույն ժամանակ նա բացաբայտորեն նվաղում էր, հյուժվում, այլասերվում: Ահագին գումարները, վոր ստացվում էին կրեդիտով, կալվածները գրավ գնելով և այլն, կալվածատերերը մեծ մասամբ ծախսում էին վոչ թէ իրենց տնտեսութեան վրա, այլ գեղիութիւններին, առհասարակ վոչ արտադրողական կարիքների վրա: Գալիս էր վճարելու ժամկետը — կալվածա-

տերը վճարել չէր կարողանում ու այդպիսով կորցնում էին նախնիքներից ժառանգած կալվածները:

1887 թվից մինչև 1900 թ., այսինքն 13 տարվա ընթացքում կալվածատերերի հողային սեփականութիւնը պակասեց 33,7%: Կալվածատիրական յետամնաց տնտեսութեան սուր ճգնաժամը, չնայած նրան, վոր ճորտատիրական պետական իշխանութիւնը Ալեքսանդր III-ի ժամանակ ամեն ինչ ձգեց կշեռքի վրա՝ ռեակցիոն կալվածատերերին — իրա գահի նեցուկը — փրկելու համար, դեռևս զգացվում էր 1905 — 1907 թ. թ. առաջին հեղափոխութիւնից բավական ժամանակ առաջ: Սակայն կալվածատիրական տնտեսութիւնը, դեռևս պահելով «հրամանատարական բարձրունքները», շարունակում էր մնալ իբրև մեծագույն արգելք՝ նոր, կապիտալիստական սկզբունքների վրա հիմնված հարաբերութիւնների գյուղ մտնելուն. այդ արգելքը պետք էր վերացնել, ինչ գնով էլ լինէր:

1861 թվի ռեֆորմը — «ներքևից բարեփոխումը հողից ձրացող հեղափոխութիւն»-ից խուսափելու այդ անհաջող փորձը չտվեց քիչ-շատ շոշափելի արդյունք: Չիշտ է, ճորտատիրական ռեֆորմից հետո անցած կես դարի ընթացքում առևտրական ու գյուղացիական բուրժուազիան ձեռք բերեց աղքատացած ազնվականութիւնից 3/4 միլիարդ ուրբլու արժողութեամբ հողեր: Սակայն, հողերի այդ ձեռքից-ձեռք անցնելուց շահեց միայն կուլակը, բայց վոչ գյուղացիութեան մասսան: Վերջինս, ընդհակառակը, ստացավ, ինչպես հայտնի յէ, «ազատութիւն հողից», կորցնելով մինչ ռեֆորմը ունեցած հողերի մինչև 1/5 մասը: Բացի զրանից գյուղացիութիւնը վճարեց կալվածատերերին իր իսկ հողերի համար ավելի քան մեկ ու կես միլիարդ ուրբլի:

Առաջին հեղափոխութեան նախորդակին գյուղացիութեան զրութիւնը ավելի ևս ծանրացավ: Յետե 1861 թ. ռեֆորմից հետո ամեն մի տղամարդու գալիս էր միջին

հաշվով 4,83 դեսյատին, 1905 թ. յուրաքանչյուր շնչին ձեռք բերված հողամասերի հետ միասին հասնում էր միայն 3,1 դես., այսինքն՝ գյուղացիական հողատիրության մակարդակը կրճատվել էր 36%-ով:

Մի հեղինակ—Ա. Ն. Զակ, հակադրելով իրար հողերի բաշխումը 1877 և 1905 թվերին, բերում է հետևյալ տվյալները (նախկին յեվրոպական Ռուսաստանի 49 նահանգներում) —

Հողեր	1877 թ.		1905 թ.	
	միլիոն դեսյատ.	% ամբողջ մակարդակի նկատմամբ	միլիոն դեսյատ.	% ամբողջ մակարդակի նկատմամբ
1. Պետական . . . . .	150,4	39,8	138,1	36,2
2. Արքունական . . . . .	7,5	2,0	7,8	2,1
3. Հիմնարկների ու իրավական դեմքերի (յեկեղեցիների, վանքերի, քաղաքների և այլն) . . . . .	8,5	2,3	6,9	1,8
4. Գյուղացիական հողաբաժիններ (բացի անհարմար հողերից) . . . . .	116,7	31,0	128,9	33,8
5. Մասնավոր սեփականատերերի	94,0	24,9	98,4	26,1
Ընդամենը	377,0	100,0	381,1	100,0

Ինչպես տեսնում ենք, բոլոր հողերի միայն մոտ 1/3 մասը 1905 թվին պատկանում էր գյուղացիությանը: Հողերի առյուծի բաժինը մնում էր պետության, կալվածատերերի, յեկեղեցիների, թագավորի (արքունական) ձեռքին:

Սկզբում թագուն, խուլ, ապա և բաց պայքարը ծավալվում էր, գլխավորապես, հողերի շուրջը, վորոնք, չնայած գյուղացու ահագին ձգտումին դեպի հողը, մնում էին դասակարգայնորեն նրան ոտար տարրերի ձեռքում: Պարզ է, վոր հողագործը միանգամայն բնական ազահությամբ նայում էր վոչ միայն պետական, արքունական ու վանքապատկան

հողերի վրա, այլև մասնավոր-սեփականատիրական, ուր դեկավարող դիրք ունեյին խոշոր կալվածատերերը:

Վ. Ի. Լենինը տալիս է մասնավոր անձնական հողային սեփականության հետևյալ պատկերը Ռուսաստանում 1905 թվին՝

Հողատիրույթի բաժանումները	Մասնավոր անձնական հողային սեփականությունը Յեվրոպ. Ռուսաստանում		
	Հողատիրութ.	Գեսյատին հող	Մեկ հողատ. միջին հաշվ. դեսյատին
Մինչև 10 դեսյատին	409.864	1.625.226	3,9
10— 50 դեսյատին	209.119	4.891.031	23,4
50— 500 »	106.065	17.326.495	163,3
500— 2000 »	21.745	20.590.708	947,0
2000—10000 »	5.486	20.602.109	3.825,0
10000-ից բարձր	699	20.798.504	29.754,0
Ընդամենը 500 դեսյատին բարձր	27.833	61.991.321	2.227
Ընդամենը Յեվրոպակ. Ռուսաստանում	752.881	85.834.073	114

«Այստեղ մենք տեսնում ենք — յեզրակացնում է Լենինը, — նախ՝ խոշոր հողատիրության հսկայական գերակշռումը — 619 հազար մանր հողատերեր (մինչև 50 դեսյատին) ունեն միայն 6<sup>1</sup>/<sub>2</sub> միլիոն դեսյատին: Յերկրորդ՝ մենք տեսնում ենք անչափ ընդարձակ լատիֆունդիաներ՝ 699 սեփականատերեր ունեն գրեթե 30.000-ական դեսյատին յուրաքանչյուրը: 28 հազար սեփականատերեր կենտրոնացնում են 62 միլ. դեսյատին, այսինքն 2.227 դեսյատին ամեն մեկը: Այդ խոշոր կալվածատերերի ճնշող մեծամասնությունը պատկանում է ազնվականներին, այն է՝ 18.102 կալված (27.833-ից) և 44.471.994 դեսյատին հող, այսինքն, լատիֆունդիաների ընդհանուր մակարդակի ավելի քան 70%-ը:

Ճորտատեր-կալվածատերերի միջնադարյան հողատիրությունը միանգամայն պարզ նկարագրվում է այդ տվյալներով»:

Քաղցած  
նորմա

Գյուղում, սակավահողութայան շնորհիվ, մնում էյին ազատ ձեռքեր: Փաբրիկներն ու գործարանները կլանում էյին գյուղացիութայան տարեկան աճման 1/3-ից վոչ ավելին: Այդպիսով «ավելորդ բերանները» գյուղում դարձան կենցաղային յերևույթ. նրանք պակասեցնում էյին գյուղացիական աշխատանքի արտադրողականությունը ու իջեցնում գյուղի ընդհանուր նյութական մակարդակը: Գյուղացին հեծում էր ուժից վեր վտուրքերի ու հարկերի ծանր լծի տակ: Համաձայն կառավարութայան 1902 թվին կազմակերպած տեղական գյուղատնտեսական կոմիտեների տվյալներին, զանազան հարկերի ու տուրքերի վրա ծախսվում էր գյուղացիութայան հողագործական մաքուր յեկամտի 50-ից մինչև 100 տոկոսը և նույնիսկ ավելին: Չքավոր գյուղացիությունը ու միջակ գյուղացիութայան լայն մասսան շատ խեղճ, մուրացիկ գոյություն էր քարշ տալիս, մանավանդ անբերրի տարիները: Իսկ պետք է ասել, վոր գյուղատնտեսութայան յետամնացութայան շնորհիվ, անբերրիությունը մինչ-հեղափոխական գյուղի գրեթե մշտական հյուրն էր:

Յերկաթուղագծերի անցկացնելը անցյալ դարի յերկրորդ կիսում չափազանց ուժեղացրեց հացի ապրանքաշրջանառութայան աճումը, մասնավորապես—հացի արտահանությունը: Սակայն, հացի արտահանութայան աճումը հետևանք էր գյուղացիութայան գրության վոչ թե բարելավելուն, այլ, ընդհակառակը, վատանալուն: Գյուղացին ինքը կիսաքաղցած էր մնում, բայց և այնպես ծախում էր իր հացը, վորպեսզի վճարի պետութայանը ընթացիկ հարկերն ու տուրքերը:

Ռուս գյուղացին ապրում էր «քաղցած նորմայով», անհամեմատ ավելի ցածր, քան այլ յերկրներում: Յեթե վերցնենք հացի ու կարտոֆիլի գործածութայան նորման ազգաբնակչութայան մեկ շնչի վրա նախապատերազմյան տարիներին, կստանանք հետևյալ պատկերը. — Գերմանիա-

յում — 27,8 փ. տարին, Անգլիայում — 26,4 փ., Ավստրո-Վենգրիայում — 23,8 փ., իսկ Ռուսաստանում — միայն 17,1 փութ: Կիսաքաղց, դատապարտված ծանր, ստրկական աշխատանքի, սակավահողությունից ու հողագրկությունից խեղդվող գյուղացին չէր կարող, բնականաբար, իրեն «յերջանկացած» զգալ 1861 թվի «մեծ ուժգորմով» — ու յեղք էր վորոնում իր վողբերգական վիճակից: Վոր հեղափոխութայան պատճառն էր վոչ թե մտավորականութայան ու հրեաների «վոճրագործ ագիտացիան», այլ գյուղացիութայան տնտեսական վիճակը, վոր անխուսափելիորեն մղում էր նրան տիրող կարգերից անբավականների բանակը, — այդ ճշմարտությունը ըմբռնում էյին նույնիսկ հին իշխանութայան քիչ-շատ մտածող ներկայացուցիչները, վոր մոտից ուսումնասիրել էյին «բունտար-մուժիկին»:

Ահա, որինակ, Վիտեբսկի նահանգական Դասակարգային բեկամուձայնը ժանդարմական վարչութայան պետի չափազանց բնորոշ գաղտնի ուսպորտը ժանդարմների շեֆին, գրված 1905 թ. մարտի 13-ին Դվինսկի ու այլ գավառների գյուղացիական հուզմունքների պատճառների մասին.

«Տեղի ունեցած դեպքերի մերձավոր պատճառը — գրում է մեկ վոստիկանը մյուսին — առհասարակ գյուղացիութայան ու մանավանդ այդ գավառների գյուղացիութայան չափազանց ծանր ու խեղճ տնտեսական կացությունն է: Վոչ միայն յեղած հացն է կերված, այլև այն, վոր պահված էր ցանքսի համար, այնպես վոր գյուղացիների մեծամասնությունը վոչինչ չուների ու պետք է հաշվել, վոր ներկայումս գյուղացիութայան մեջ սովն է տիրում: Կալվածատերը հայտնում է, թե նա տեսել է այն հացը, վոր ուտում են ներկայումս գյուղացիները, ու իր զարմանքն է արտահայտում, թե ինչպես կարելի յե այդ ուտել և վոր այդ հացը ուտողները դեռ վողջ են»:



ե, վոր այդ մարդիկ ստիպված են գնել ևս մոտ 7 միլ. փութ հաց, հաշվելով 50 կոպ. փութը — մոտ 3 1/2 միլ. ուրբի գումարի: Իսկ վորովհետև ժողովրդի մոտ փող չկա, նա ստիպված է դա ձեռք բերել խոշոր տոկոսներով — փութա- ուրբյունների ու ծանր աշխատանքի միջոցով: Իմ կարգա- դրության տակ յեղած նյութերից պարզ է և այն, վոր որավարձ աշխատանքը նահանգում շատ վատ է վարձա- տրվում, արդյունաբերությունը թույլ է զարգացած, սնանկագործական արհեստներ նույնպես չկան: Կողմակի աշխատանքների շրջանը ևս, գյուղատնտեսական մեքենա- ների արտադրության զարգացման շնորհիվ, տարեց-տարի սահմանափակվում է»:

1902 թվի «անկարգությունների» գործի նախնական քննության ժամանակ գյուղացիները արդարացնում էին իրենց գործողությունները հողային ծայրահեղ կարիքով: Մի շարք այդորինակ ցուցմունքներ բերված են Մ. Ն. Պոկրովսկու մոտ («Ռուսաց պատմությունը ամենասեղմ տեսությամբ», մաս III, պրակ I): «Յերբ տուժած Սրե- սենկոն դիմում է իրեն կողոպտելու յեկած ամբոխին ու հարցնում, թե ինչո՞ւ յեն նրանք ցանկանում քայքայել նրա տնտեսությունը, մեղադրյալ Ջայցկվը պատասխա- նում է՝ — «Մենակ դու 100 դեսյատին ունես, իսկ մենք միայն 1-ական դեսյատին. մեկ փորձեյիր ապրել 1 դես- յատին հողով — այն ժամանակ կտեսնեյիր, թե ինչպես մենք քեզ կկերակրեյինք»:

«Յերբ վկա Կադենեցը, արդեն Յախոնտովայի եկո- նոմիայի կողոպուտի վերջին մոմենտին, դիմում է մեղա- գրյալներից մեկին ու համոզում վերջ տալ վայրագու- թյանը, վոր կայանում էր կառավարչի տան պատուհան- ների ապակիներն ու շրջանակները ջարդելում, մեղադրյալը պատասխանում է՝ «Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ եմ յես ապրել 3/4 դեսյատինով» — ու հանդիսս տանում է կո- ղոպած իրերի լիքը սայլը: Մոտավորապես նույն բացա-

տրությունը տայիս է այդ կողոպուտին մասնակից մեղա- դրյալ-գյուղացի Կիյանը. — «Թույլ տվեք պատմել ձեզ մեր գեղջկական քամբախտ կյանքի մասին — սկսում է նա: — Յես ունեմ ծերուկ հայր ու վեց փոքրահասակներ — առանց մոր. և մենք պետք է ապրենք 3/4 դեսյատին կալվածով ու 1/4 դեսյատին վարելահողով: Կովը արածացնելու հա- մար մենք վճարում ենք կասալառու Կուզմինովին 12 ռ., իսկ մի դեսյատին հացի համար ստիպված ենք հավաքել յերեք դեսյատին: Ու այդ ամբողջ աշխատանքը պետք է կատարենք յես ու հայրս մեր յերկու դույզ ձեռներով: Այժմ նույնիսկ այսպիսի բարձր գնով դժվար է հող գտնել: Այսպես ապրել չի կարելի, — շարունակում է Կիյանը, — մենք խեղդվում ենք: Ի՞նչ անենք: Իմեցինք մենք, գյու- ղացիներս, ամենուրեք: Ջեմսկիյ նաչալնիկի մոտ էլ յե- դանք, գեմսկի ուպրավա գնացինք — վոչ մի տեղ մեզ չեն ընդունում, վոչ վոք մեզ չի ոգնում»...

Ուրեմն, գյուղացիական շարժմանը մասնակցում էին դիտավորապես մուրացկանության սահմանագծին հասած (գիտնականորեն՝ պառուպերիզացիայի յենթարկած) գյու- ղացիները — հողագործ ու սակավահող: Բնորոշ է, սա- կայն, այն, վոր շարժման ղեկավարները, նրա շտաբը, ինչպես հաստատում է ընկ. Պոկրովսկին, «վոչ թե այդ գյուղական ընչազուրկներն էյին, այլ մանր գյուղատնտե- սական արտադրողները, նրանք, վոր այն ժամանակ կոչ- վում էյին «տնտեսական մուժիչոկներ» և վորոնց տնտեսա- կան դրությունը անգոր բը մրցման դիմանալու կապի- տալիստական հողագործության հետ: «Պուզա- չովչինան» — ավելացնում է Պոկրովսկին — սկսում է կամաց-կամաց ընդունել XX դարին ավելի համապատաս- խան ձևեր»:

Թե համեմատաբար վորքան լայն էր 1902 թվի գար- նան շարժումը, յերևում է հետևյալ տվյալներից. — Պու- տավայի ու Խարկովի նահանգների չորս գավառներում

«կողոպտված» եր 54 կալված, 25 եկոնոմիա ու վառված — 2 կալված: Կողոպտված էյին նաև այդ շրջանում գտնված 2 շաքարի գործարանները:

Գյուղացիութունը շատ դաժան պատիժների յենթարկվեց այդ «բուստերի» համար: Առանձնապես «փայլեց» իր խստութուններով գյուղացիության նկատմամբ Խարկովի նահանգապետ իշխան Ուրլենսկին: Միայն այդ յերկու նահանգներում — Խարկովի ու Պոլտավայի — դատի յենթարկվեցին մոտ 1100 գյուղացի, վորոնցից տաժանակիր աշխատանքի ու բանտարգելության դատապարտվեցին մոտ 900 մարդ: Իսկ Ուրլենսկին, «ցարին ու հայրենիքին» մատուցած ծառայության համար, արժանացավ գերագույն շնորհակալության ու ստացավ Ֆինլյանդական գեներալ-նահանգապետի պաշտոնը:

Գյուղացիական շարժման մյուս հիմնական շրջանում — Սարատովի նահանգում — գրեթե նույնչափ «փայլեց» բանվորների ու գյուղացիների մի այլ դահիճը — նահանգապետ Ստոլըպինը, վոր հետո — 1905 թ. հեղափոխութունից հետո — զարձավ ցարի առաջին մինիստրը: Նրա հրամանով ամբողջ Ռուսաստանը ծածկվեց հարյուրավոր կախադաններով՝ կառավարության գերի վերցրած հեղափոխականների համար՝ ու մահապատիժը կախադանի միջոցով զարձավ կենցաղային յերևույթ «ստոլըպինյան փողկապ» բնորոշ անունով:

Մերձվորդյան շրջանի գյուղերում գյուղացիության մասսայական գանակոծումն եր տիրում — ճիպտաներով ու շոմպոլներով, ու «ինքը» Ստոլըպինը, շրջապատված կողակներով, ղեկավարում եր այդ «աստվածահաճո» գործը...

Համեմատաբար մի քիչ թույլ էյին 1903—4 թվերի հուգմուսները 1903 — 1904 թվերի հուգմուսները՝ առանց ջին հեղափոխության անմիջական նախորդին:

Առաջավորներից մեկը զարձյալ Սարատովի նահանգն եր: Պենզայի նահանգում գյուղացիները՝ մասսայորեն վառում

էյին կալվածները ու գործադրում յուրատեսակ բոյկոտի սխտեմ, հրաժարվելով կալվածատերերի մոտ աշխատելուց: Գուրիայում (Վրաստան) այդ բոյկոտը, վոր ըստ էյուլթյան բանվորներից փոխառած դասակարգային կովի գործադուլային ձևն եր, ավելի ևս սուր բնույթ ստացավ. այստեղ կալվածատերերը ուժով ստիպում էյին գյուղացիներին աշխատել իրենց դաշտերում:

Ռյազանի, Սերսոնի, Կիևի, Պոդոլի նահանգներում նույն պատկերն եր:

Բոյկոտ: Տնտեսութունների քայքայում: Յերբեմն՝ առանձնապես ստեղի կալվածատիրոջ սպանութուն, ինչպես, որինակ, իշխան Գագարինի — Ռյազանի նահանգում ու իշխան Ուրուսովի — Չերնիգովի նահանգում. և ապա՝ ծեծ, գանակոծում, բանտարկութուններ, աքսոր, տաժանակիր աշխատանք: Այսպես ծավալվում էյին դեպքերը:

Գյուղացիության յելույթները անշատ էյին, առանց ղեկավարության բանվորների կողմից, — և կառավարությանը հաջողվում եր առանց մեծ ղժվարութունների արյան հեղեղների մեջ խեղդել այդ «գեղջկական բուստերը»:

42656-63

III. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐժՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԴԱՐՁԱՎ ՇԵՐՔԱԿԱՆ

1905 թ. գարնանը գյուղացիական շարժումների ուժեղ ալիքները վողողում են նախկին Յեվրոպական Ռուսաստանի ու Անդրկովկասի մի շարք շրջանները:

Նշանն այս անգամ տրվեց Ուրյոլի և Կուրսկի նահանգներից, ուր արդեն փետրվարին գյուղացիները քանդում են կալվածատիրական տնտեսութունները ու վառում Տերեչչենկոյի շաքարի գործարանը:

«Շարժումը այսպես եր սկսվում — գրում ե 1905 — 1907 թ. թ. գյուղացիական հեղափոխության պատմագիրը




Ա. Շեստակովը. — Նշանակած որը կարվածից վոչ հեռու վառվում եր հարդի խուրձը, խարույկ և կամ մի քիչ հարդ յերկար փայտի ծայրին: Այդ նշանով մեծ արագությամբ հավաքվում էին շրջակա գյուղերից ամբոխ: Հավաքվում էին յերբեմն մինչև 500 — 700 սայլ: Հավաքված գյուղացիութունը գնում եր եկոնումիա, կոտորում հացի շտեմարանների կողպեքները, լեցնում սայլերը ու խաղաղ առն ուղևորվում»:

Սակայն, այս խաղաղ ձևերը հաճախ, մանավանդ «բուհուովչիկներին» նկատմամբ յեղած խստություններից ու վայրագություններից հետո, փոխարինվում էին հրաձգությունների ու «ազնվական բներ»-ի կործանման: Գյուղացիները առանց թուլտվության փայտ էին կըտրում մասնավոր ու պետական անտառներում, բաշխում էին իրար մեջ կարվածատերերի հացահատիկների ու անասնակերերի պահեստները: Մանր վարչական պաշտոնյաները — ուրյադնիկները, սոտսկինները մեծ մասամբ չէին համարձակվում հակառակել այդ շարժմանը, փորձից իմանալով, վոր գյուղացին, կացինը վերցնելուց հետո, հանաք չի սիրում:

Նույն գարնանը մի շարք շրջաններում՝ «ՈՏՐԱՔՈՏ-ԿԱՆ»-ների դեմ Պենդայի, Սամարայի, Սիմբերսկի ու այլ նահանգներում սկսվեց շարժում «ոտրաբուտկաների» դեմ: Գյուղացիները չէին համաձայնում աշխատել կարվածատիրական դաշտերում հողի կապալի պայմանով և պահանջում էին մեղմացնել կապալատվության պայմանները:

Առանձին շրջաններում, մանավանդ վոչ-սևահող շրջանում, գյուղացիները հրաժարվում էին սուրբերը վճարել ու հողաբաժինը ավելացնելու «խնդրի» հետ միաժամանակ պահանջում էին ստեղծել պայմաններ վոչ-հողագործական արհեստների զարգացման համար, բաց անել գյուղատնտեսական ու արհեստավորական դպրոցներ, հասարակութուն դատավարության մեջ և այլն:



Այդպիսի բնույթ են կրում, որինակ, Ննդիր ու պահանջ — միաժամանակ Ռուզսկի գավառի Սոտեբց գյուղի առաջարկները, ուր խնդիրները խառնված են պահանջների հետ, ինչպես նաև քաղաքականորեն յետամնաց տրամադրությունները հեղափոխական պահանջների հետ:

1. «Խնդրում ենք անմիջապես կարվածատերերի ու սեփականատերերի հողերից, վոր գյուղացիական հողաբաժիններին կից են, կտրել գյուղացիության ոգտին, իսկ հողի գնահատումը կատարել հատուկ ընտրված հանձնախմբի միջոցով — սեփականատերերի ու գյուղացիների մասնակցությամբ: Այդ հողը միացնել կայսերական կամքի հայեցողությամբ:

2. Անմիջապես վոչնչացնել հողի միջշերտավորումը, վոր կործանարար չարիքներ է հասցնում գյուղացիներին:

3. Գյուղացիներին վարկ տալ՝ ըստ որենքի հաստատված տոկոսներով՝ ամեն մի առանձին տանտիրոջ, առանց վորևե հասարակական վորոշումների, վորոնք գյուղացիների վրա ծանր են ազդում, — գյուղացիական տնտեսությանը ոգնելու համար:

4. Վազմակերպել պահեստ, թեկուզ զեմստվոյին կից սերմերը որինական տոկոսներով գրավ դնելու ու գյուղացիներին այդ սերմացուի հանդեպ նպաստ բաց թողնելու համար — կուլակների շահագործումից խուսափելու նպատակով:

5. Անհրաժեշտ է զեմստվոյում մտցնել ազատ գյուղացիների ներկայացչութուն — 2/3, բացի ստարշինաներից ու պաշտոնյաներից, և 1/3 մտավորականութուն ազնվականներից, առանց վորոնց չեն կարող»:

Ինքնակամ հերկում Գյուղացիության տրամադրությունները, վոր արտահայտված են այս փաստաթղթի մեջ, բնորոշ են շարժման սկզբնական շրջանի համար: Սակայն, 1905 թ. գարնանը արդեն վորո-

նեժի նահանգի, Կորոտոյակսկիյ գավառի Մոստյուժե գյուղի գյուղացիները ուժով գրավում են կալվածատիրոջ հողի մասը ու հերկում 30 դեսյատին: Շարժման այն նոր ձևը միանգամայն չէր համակերպվում «կայսերական կամքի հայեցողության»-ը ուղղված հույսերի հետ: Այդ ձևը շատ արագ տարածվեց՝ Տվերի, Խերսոնի ու Տավրիկյան նահանգներում:

Վիտեբսկի նահանգում առատորեն հոսում էր գյուղացիության արյունը. այստեղ իսկական պատերազմ էր գյուղացիության ու կոզակների մեջ:

Գյուղացիները սկսում էին գործել քիչ-շատ գիտակցաբար ու տեղ-տեղ նույնիսկ կազմակերպված, յերբ զոգվում էին հեղափոխական բանվորների հետ: Դեռ 1905 թվի գարնանը այդ նկատել էր նույնիսկ բուրժուական «Ռուսսկիյի Վեգոմոստի» թերթը: «Ներկա շարժման մեջ — գրում էր թերթը — արդեն նկատվում է և՛ գիտակցականութուն, և՛ նույնիսկ մի փոքր կազմակերպություն: Գյուղացիները ներկայացնում են և մի կարգ ընդհանուր պահանջներ, այնպիսի պահանջներ, վորոնց մասին սրանից միայն մի քանի տարի առաջ նրանք, թվում էր, գաղափար ել չէին կարող ունենալ: Հուզմունքների ժամանակ գրեթե չէին նկատվում բռնություններ անձնավորութունների դեմ: Գյուղացիները մեծ մասամբ գալիս էին, վերցնում ինչ վոր հարկավոր է ու վերադառնում: Քանավանց գործարանները, վորոնց հետ սուր, լարված հարաբերությունների մեջ էին: Այն կալվածները, ուր գյուղացիների հետ վերաբերվում էին քիչ-շատ մարդավայել, շատ քիչ տուժեցին»:

1905 թվի ամառը յերևան յեկավ շարժման նոր ձևը — յեկվոր բանվորների աշխատանքից հանելը կալվածատերերի մոտից՝ բանվորներին կալվածատիրական անտառները չթողնելը:

Նույն թվի հուլիսին Նիժեգորոդսկիյ նահանգի, Կորբատովսկիյ գավառի, Ոզերկի գյուղի գյուղացիները սարքեցին քաղաքական ցույց — գյուղի վրա փովեցին կարմիր դրոշակները և յերիտասարդութունը հնչեցրեց հեղափոխական յերգերը: Լեհաստանում ու Մերձբալտյան յերկրում այդպիսի ցույցեր կրկնվեցին շատ անգամ:

Նույն ամառը, հացերի ու խոտերի անբերրիության շնորհիվ, գյուղացիները շատ տեղերում գրավում էին կալվածատիրական մարզերն ու արոտատեղերը, քանդում էին հացի շտեմարանները, բաժանում իրար մեջ բռնի ձևով գրավված հացը, յուրացնում էին մասնատիրական հողերի բերքը:

Սակայն առանձին թափ ստացավ գյուղացիական շարժումը աշնանը — բանվորների հոկտեմբերյան մեծ գործադուլից հետո, վոր մինչև հիմքը ցնցեց ցարական գահը:

Գյուղացիները շատ արագ ընդորինակեցին բանվորներից շարժման նոր ձևը — կան գործադուլը: Բոյկոտ, գրավում, հրաձգություն, ինքնակամ հերկում ու սերմանում սեփականատիրական հողերի, կալվածատիրական հացի ու անասնակերի բաշխումը — գյուղացիական շարժման այս բոլոր ձևերը այդ մոմենտին արդեն տարածվել էին շատ լայն չափերով:

Վորոնեժի նահանգապետը զեկուցում էր ներքին գործերի մինիստրին՝ «Բիրյուչսկի գավառում շարժումը շատ ուժեղանում է. Խմելի ու Պալատովի շրջանների գյուղացիները, զինված հրացաններով, յերեք անգամ հարձակվել են Շիդլովսկու կալվածի վրա ու յետ մղվել կոպակների կողմից. վերջիններս շատ հույժված են: Սպասվում է նոր հարձակում: Անկարգությունները ստանում են զինված ապստամբության բնույթ»...

Կուրսկի նահանգի կալվածատիրական գուբրները նույն ժամանակ գանգատվում էին «ցար-բատյուշկային» —

«Հրամայիր, թագավոր, վերջ տալ չարագործութուններին, պաշտպանիր քայքայումից, վոր բերում է գազանացած ամբոխը, առանց գիտակցելու իր գործողութունների ամբողջ սարսափը ու կուրորեն ձգտելով ձերդ մեծության — ուսական մեծդ ինքնակալի — պետականության հիմքերը քանդել»:

Բայց ցարը ինքն այդ պահուն ստիպված եր մի կերպ ծածկելու իր գայլի ժանիքը ու շարժելու ազվեսի պոչը: Նիկոլայ II դողդողում եր իր կաշվի վրա ու հաշվում եր, վոչ առանց հիմքի, վոր մոմենտը անհարմար է՝ քաղաքում ու գյուղում ծավալվող հեղափոխական շարժումը խիստ ու բիւտ միջոցներով ճնշելու համար:

1905 թվի առունը: Նոյեմբերի 3-ի ցարական ուկազը

1905 թվի աշնանը սարսափը տիրեց պետական բոլոր շրջաններին, նույն թվում և ցարին: Ցարական կառավարության այդ շրջանի սարսափահար վիճակի պատմական հիմնական հուշարձանն է հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, վոր կորզեց ցարի ճանկերից հոկտեմբերյան ընդհանուր գործադուր: Յերկրորդ այդորինակ փաստաթուղթն է նոյեմբերի 3-ի ցարական ուկազը գյուղացիական գործերի մասին, վոր հրատարակվեց յերկրորդ (նոյեմբերյան) ընդհանուր գործադուրի մոմենտին: Այդ ուկազի մեջ ցարը շոյում է խոստումներ ու յերկրիմորեն հավատացնում է իրա «հավատարիմ հպատակներին», վոր «գյուղացիական կարիքները մոտ են իրա սրտին» և «չեն կարող մնալ առանց ուշադրության»:

Բանվորական գործադուրից, այլև գյուղացիական «բունտերից» սարսափահար, Նիկոլայ Ռոմանովը հրամայեց մի քիչ թեթևացնել գյուղացիության դրությունը:

Նախկին կալվածատիրական, պետական և արքունական գյուղացիների դուրս գնման վճարումները 1906 թ. հունվարի 1-ից պակասեցնել կիսով չափ, իսկ 1907 թ. հունվարի 1-ից այդ վճարումները բոլորովին դադարեցնել:

Հնարավորություն տալ Գյուղացիական Հողային Բանկին ավելի հաջող կերպով ոգնել սակավահող գյուղացիներին իրենց հողատիրության լայնացմանը, ավելացնելով բանկի միջոցները ու հաստատելով նպաստների ավելի ձեռնտու, արտոնյալ պայմաններ:

Ուկազը վերջանում եր հետևյալ խոսքերով. «Հուսով ենք, վոր մեր սրտին հաճելի գյուղացիական ազգաբնակչութունը, հետևելով քրիստոնեական բարիքի ու սիրո պատվիրաններին, կլսե մեր արքայական կոչը — պահպանել ամենուրեք խաղաղություն ու անդորրություն» և այլն:

Սակայն, իզուր եր ցարը «հուսով»:

Հոկտեմբերին քայքայումի յենթակա Հոկտեմբեր յել եյին տասնյակ ու հարյուրավոր կալված-նոյեմբեր: Չափեր: Նոյեմբերին այդ թիվը ավելի ևս բարձրացավ: Մինչև նոյեմբերի 11-ը Ստարոսելսկիյ ու Նովոսելսկիյ գավառներում գյուղացիները քանդել, քայքայել եյին 37 կալված. մինչև նոյեմբերի 15-ը Սիմբիրսկի նահանգի, Կուրմըշի գավառում այրված ու կողոպտված եյին 25 կալված և այլն: 1905 թվի աշնան ընթացքում ընդամենը քայքայված եր՝ Սարատովի նահանգում — 272 կալված, Տամբովի նահանգում — 130, Ուրլովի — 84, Պենզայի — 30, Կուրսկի — 127, Ուկրայինայում — ավելի քան 200, Մերձբալտյան նահանգներում — 260: Միայն 19 նահանգներում կալվածների քայքայման վրասները հասան, ըստ պաշտոնական տվյալների, 29 միլ. ուրբու, քանդվեցին իշխաններ Պրոպոբովսկու, Գոլիցինի, կոմս Դեմիդովի, դուքս Լեյխտենբերգսկու և ուրիշների պալատները:

1905 թվի հեղափոխական շարժման ընդհանուր հաշվեգումարը բնորոշվում է հետևյալ աղյուսակով. (Տես եջ 24)

Կենտրոնական-յերկրագործական շրջանում, Մալոռոսիայում և Նովոռոսիայում շարժման գերա-

Շրջանները անունները	Շարժման յենթ. գավառները %/6-ով՝ շարժման յենթ. ընդ. քանակի վերաբ.			
	Ավերում	Ինքնա- կամ ան- տան. կտր.	Գործա- դուլ	Շարժման խառն ձևեր
Կենտրոնական-յերկրագործ . . . . .	68	11	—	21
Արդյունաբերական և հյուսիսային	—	90	—	10
Հարավ-Արևմտյան . . . . .	—	—	65	35
Հյուսիս-Արևմտյան . . . . .	—	50	40	10
Արևմտյան և Մերձվոլգյան . . . . .	25	40	—	35
Մալոռոսիա և Նովոռոսիա . . . . .	57	—	—	43

կշռող ձևն էր ավերելը, արդյունաբերական ու Հյուսիսային, Հյուսիս-Արևմտյան, Արևելյան և Մերձվոլգյան շրջաններում — անտառների ինքնակամ կտրումը, Հարավ-Արևմտյան շրջանում — գործադուլը: 1905 թվի հողային շարժումը ցույց տվեց, թե վորպիսի լուրջ դաշնակից կարող է ունենալ պրոլետարիատը ի դեմս հեղափոխական գյուղացիության:

«Այժմ արդեն գյուղացիական շարժման խնդիրը — գրում էր Լենինը 1905 թ. նոյեմբերին — դարձավ հրատապ հերթական վոչ թե տեսական, այլ ամենաանմիջական գործնական նշանակություն ունեցող: Այժմ անհրաժեշտ է մեր ընդհանուր լոգունները վերածել ուղղակի կոչերի՝ հեղափոխական պրոլետարիատի կողմից հեղափոխական գյուղացիությանը ուղղած: Այժմ արդեն հասել է այն մոմենտը, յերբ գյուղացիությունը՝ զուրս է գալիս հրապարակ՝ իբրև ուսական կյանքի նոր սարքավորման գիտակից ստեղծագործող: Ու գյուղացիության գիտակցականությունն աճում է կախված ուսական մեծ հեղափոխության ընթացքն ու վախճանը»:

IV. ՅԵՐԿՐՈՐԴ ԱԼԻՔԸ

1906 ԹԻՎԸ

1906 թվի աշնանը հողային գյուղացիական շարժումը դարձյալ հասավ ահագին բարձրության: 1905 թվի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում հուզմունքներ տեղի ունեցին միայն 85 գավառներում, այսինքն — Յեվրոպական Ռուսաստանի բոլոր գավառների 17%-ում: 1906 թվին — մայիսից մինչև ոգոստոս — շարժումը ծավալված էր Յեվրոպական Ռուսաստանի գավառների 50%-ի վրա: Ուրիշ խոսքով, հեղափոխությունը գրեթե հասել էր 1905 թվի աշնանային վերելքի շրջանին, յերբ շարժումը ընդգրկել էր Յեվր. Ռուսաստանի գավառների 52%-ը:

Հեղափոխության այս ետապին դասակարգային պայքարը ստացավ առանձնապես սուր ձև: Քաղաքներում հեղափոխությունը ճնշելուց հետո, կառավարության ձեռքերը այլևս կապված չէին ու նա հնարավորություն ուներ իր խստությունների ուժը փորձելու գյուղի վրա: «Անհանգիստ» նահանգներում գյուղացիությունը մատնված էր սովամահության, շնորհիվ, մի կողմից, 1905 թ. անբերրիությանը, իսկ մյուս կողմից, Սառլզպինի պրովոկացիոն քաղաքականությունը, վորով արգելված էր պարենային նպաստ տալ «անբարեհույս» ու «կրամոյնիկ» գյուղացիներին: Պետք էր կամա-ակամա «բուստի» դիմել, ուժով խլել կալվածատերերից հաց, կարտոֆիլ, խոտ:

Շարժումը կասեցնելու փորձերին գյուղացիությունը պատասխանում էր ցարական սպասավորներին թակելով ու սպանելով: Պալատի նահանգի, Պրիլուկակիյ գավառի Լոգատին գյուղաքաղաքում ատելի կողակները յենթարկվեցին մասսայական վոչնչացման: Զինվորները, հպատակվելով իրենց սպաներին, կրակում էին գյուղացիների վրա, սակայն վերջինները ևս ընդդիմադրում էին ու գործա-

դրում պաշտպանութեան պրիմիտիվ միջոցներ — մանգաղ, կացին և այլն: Դիակները դիզվում եյին Յեվրոպական Ռուսաստանի զանազան ծայրերում: Կառավարութեան ցանկութեանն եր՝ ինչ միջոցով ել լինի «հանգստացնել» գյուղը — վերականգնել նախկին «գերեզմանի խաղաղութեանը»:

Միապետութեանը վերջ ի վերջո հասավ իր ցանկալի նպատակին — արյան մեջ խեղդեց գյուղացիական հեղափոխութեանը, սակայն դրա համար պետք յեղավ իսկական պատերազմ հայտարարել գյուղացիութեանը և գործի դնել նույնիսկ թնդանոթներ:

Գյուղերի ու մշակոծութեան մասին վերոհիշյալ Ա. Շեստակովի մոտ գտնում են այսպիսի տվյալներ —

«... 1906 թվի աշնանը Ալեքսանդրովն գյուղում գյուղացիները քանդեցին իսպրավ-նիկի բնակարանը: Այդ առթիվ ստացված գեկույցի վրա ներքին գործերի մինիստրի ոգնական Մակարովը մակագրեց՝ — «Հեռագրել՝ անմիջապես ճնշել ապստամբութեանը, առանց քաշվելու, հարկավոր դեպքում, խստագույն միջոցներ գործադրելուց: Զորքերը պետք է գործեն արագ ու վճռական»: Մի այլ մակագրութեան մեջ (Ստավրոպոլի նահանգի դեպքերի առթիվ) ասված եր՝ «Գործադրել հենց տեղումը ռազմա-դաշտային դատարան»: Յեվ գորքերը «գործում եյին»: Պետրովսկիյ գյուղում արախերիան բաց թողեց 7 ումբը, պահանջելով հանձնել հեղափոխական կոմիտեն: Մի այլ գյուղում — Կոնստանտինովսկում — թնդանոթների 14 զարկից հետո գյուղացիները, ըստ «խաղաղար» գեներալ Լիովինովի խոսքերին, «հնազանդվեցին»: Միևնույն ժամանակ գյուղացիները ապստամբութեան շրջանում կտրում եյին հեռագրաթելերը:

Նույն այդ Կոնստանտինովսկիյ գյուղում ու մշակոծութեանից առաջ տեղի ունեցավ հետեյալ դեպքը: «Կրակելու» հրամանը թե՛ արախերիստները և թե՛ Կուբանի կոզակները

Նույն Ստավրոպոլի նահանգում գյուղացիների մի խումբ — 600 — 800 հոգով — հրացանաձգութեան եր տանում «խաղաղարար» գեն. Լիովինովի խմբի հետ, յերկու կողմերն ել կորուստներ ունեյին: Նույն նահանգի Բլազոդատնըյ գյուղում 1,500 հոգուց բաղկացած ամբոխը ստիպեց իսպրավ-նիկին բաց թողնել բանտից քաղաքական կալանավորներին, զինաթափ արավ ստրաժնիկներին, գրավեց գավառական վոստիկանատունը ու զինվորական պետի բնակարանը և ստիպեց իսպրավնիկին ստորագրել հեռագիր ներքին գործերի մինիստրին Պետական Դումայի անդամ Ռնիպկոյին կալանքից ազատելու մասին: Պետք է ասել, վոր Ռնիպկոյի ձերբակալման առթիվ Ստավրոպոլի նահանգից առհասարակ մասսայական հեռագիրներ եյին գնում ցարի անունով — «ամենահանդուգն» բովանդակութեամբ: Բլազոդատնիյ գյուղացիներին, ինչպես և շատ ուրիշներին Ստավրոպոլի նահանգում, «հնազանդեցին» ռեպրեսիաների խմբերը, վորոնց, իր հերթին, «զսպում եյին» իրենց առչներում զինվորական մուսուլման հագած ռուս գյուղացիները:

Նույն Ստավրոպոլի նահանգում գյուղացիների մի խումբ — 600 — 800 հոգով — հրացանաձգութեան եր տանում «խաղաղարար» գեն. Լիովինովի խմբի հետ, յերկու կողմերն ել կորուստներ ունեյին: Նույն նահանգի Բլազոդատնըյ գյուղում 1,500 հոգուց բաղկացած ամբոխը ստիպեց իսպրավ-նիկին բաց թողնել բանտից քաղաքական կալանավորներին, զինաթափ արավ ստրաժնիկներին, գրավեց գավառական վոստիկանատունը ու զինվորական պետի բնակարանը և ստիպեց իսպրավնիկին ստորագրել հեռագիր ներքին գործերի մինիստրին Պետական Դումայի անդամ Ռնիպկոյին կալանքից ազատելու մասին: Պետք է ասել, վոր Ռնիպկոյի ձերբակալման առթիվ Ստավրոպոլի նահանգից առհասարակ մասսայական հեռագիրներ եյին գնում ցարի անունով — «ամենահանդուգն» բովանդակութեամբ: Բլազոդատնիյ գյուղացիներին, ինչպես և շատ ուրիշներին Ստավրոպոլի նահանգում, «հնազանդեցին» ռեպրեսիաների խմբերը, վորոնց, իր հերթին, «զսպում եյին» իրենց առչներում զինվորական մուսուլման հագած ռուս գյուղացիները:

Անդրկովկասում — Վրաստանում — գեներալ Ալիխանովը «գործում եր» առանձնապես արագ: — նա հիմնահատակ եր անում գյուղացիական շարժման հեղափոխական կենտրոնները: Նա, ինչպես և գեներալ Լիովինովը, գործադրում եր թնդանոթները վոչ միայն «ցուցադրորեն», այսինքն՝ վոչ միայն ապստամբած գյուղացիներին յերկու կողմերն չելու համար, այլ և միանգամայն լրջորեն, ինչպես իսկական կռիվում — թշնամու գեմ:

Բուկեսերից դեպի ներալ Ալիխանովը «գործում եր» առանձնապես արագ: — նա հիմնահատակ եր անում գյուղացիական շարժման հեղափոխական կենտրոնները: Նա, ինչպես և գեներալ Լիովինովը, գործադրում եր թնդանոթները վոչ միայն «ցուցադրորեն», այսինքն՝ վոչ միայն ապստամբած գյուղացիներին յերկու կողմերն չելու համար, այլ և միանգամայն լրջորեն, ինչպես իսկական կռիվում — թշնամու գեմ:

դրում պաշտպանութեան պրիմիտիվ միջոցներ — մանգաղ, կացին և այլն: Դիակները դիզվում եյին Յեվրոպական Ռուսաստանի զանազան ծայրերում: Կառավարութեան ցանկութեանն եր՝ ինչ միջոցով ել լինի «հանգստացնել» գյուղը — վերականգնել նախկին «գերեզմանի խաղաղութունը»:

Միապետութունը վերջ ի վերջո հասավ իր ցանկալի նպատակին — արյան մեջ խեղդեց գյուղացիական հեղափոխութունը, սակայն դրա համար պետք յեղավ ի սկիակն պատերազմ հայտարարել գյուղացիութեանը և գործի դնել նույնիսկ թնդանոթներ:

Գյուղերի ու մեղակոծութեան մասին վերոհիշյալ Ա. Շեստակովի մոտ գտնում են այսպիսի տվյալներ —

«... 1906 թվի աշնանը Ալեքսանդրովո գյուղում գյուղացիները քանդեցին խապրավնիկի բնակարանը: Այդ առթիվ ստացված զեկույցի վրա ներքին գործերի մինիստրի ոգնական Մակարովը մակագրեց՝ «Հեռագրել՝ անմիջապես ճնշել ապստամբութունը, առանց քաշվելու, հարկավոր դեպքում, խստագույն միջոցներ գործադրելուց: Զորքերը պետք է գործեն արագ ու վճռական»: Մի այլ մակագրութեան մեջ (Ստավրոպոլի նահանգի զեպքերի առթիվ) ասված եր՝ «Գործադրել հենց տեղումը ռազմա-դաշտային դատարան»: Յեվ գորքերը «գործում եյին»: Պետրովսկի գյուղում արախերիան բաց թողեց 7 ումբ, պահանջելով հանձնել հեղափոխական կոմիտեն: Մի այլ գյուղում — Կոնստանտինովսկում — թնդանոթների 14 զարկից հետո գյուղացիները, ըստ «խաղաղար» գեներալ Լիտվինովի խոսքերին, «հնազանդվեցին»: Միևնույն ժամանակ գյուղացիները ապստամբութեան շրջանում կտրում եյին հեռագրաթերերը:

Նույն այդ Կոնստանտինովսկի գյուղում ումբակոծութունից առաջ տեղի ունեցավ հետեյալ դեպքը: «Կրակելու» հրամանը թե՛ արախերիատները և թե՛ Կուբանի կոզակների

հարյուրակը հրաժարվեցին իրագործել: Այն ժամանակ կոզակներին «հեռացրին», իսկ արախերիատների յետևը կանգնեցրին ոստիններին՝ հրացանները պատրաստ, և միմիայն այդ սպառնալիքի տակ սկսվեց ումբակոծութունը, վոր և վերջացավ հեղափոխական կոմիտեյի 16 անդամների հանձնվելովը:

Նույն Ստավրոպոլի նահանգում գյուղացիների մի խումբ — 600—800 հոգով — հրացանաձգութուն եր տանում «խաղաղար» գեռ. Լիտվինովի խմբի հետ. յերկու կողմերն ել կորուստներ ունեյին: Նույն նահանգի Բլագոդատնը գյուղում 1,500 հոգուց բաղկացած ամբոխը ստիպեց խապրավնիկին բաց թողնել բանտից քաղաքական կալանավորներին, զինաթափ արավ ստրաժնիկներին, գրավեց գավառական վոստիկանատունը ու զինվորական պետի բնակարանը և ստիպեց խապրավնիկին ստորագրել հեռագիր ներքին գործերի մինիստրին Պետական Դումայի անդամ Ռնիպկոյին կալանքից ազատելու մասին: Պետք է ասել, վոր Ռնիպկոյի ձերբակալման առթիվ Ստավրոպոլի նահանգից առհասարակ մասսայական հեռագիրներ եյին գնում ցարի անունով — «ամենահանդուգն» բովանդակութեամբ: Բլագոդատնի գյուղացիներին, ինչպես և շատ ուրիշներին Ստավրոպոլի նահանգում, «հնազանդեցրին» ոստինների խմբերը, վորոնց, իր հերթին, «զսպում եյին» իրենց առւններում զինվորական մուսկիթ հագած ոռուս գյուղացիները:

Անդրկովկասում — Վրաստանում — գեռուցներից դեպի ներալ Ալիխանովը «գործում եր» առանձնազանգուստարույուն պես դաժան. — նա հիմնահատակ եր անում գյուղացիական շարժման հեղափոխական կենտրոնները: Նա, ինչպես և գեներալ Լիտվինովը, գործադրում եր թնդանոթները վոչ միայն «ցուցադրորեն», այսինքն՝ վոչ միայն ապստամբած գյուղացիներին յերկյուղ ներշնչելու համար, այլ և միանգամայն լրջորեն, ինչպես իսկական կռվում — թշնամու դեմ:

Ռազմական կռիվները գյուղում բնորոշում էլին գյուղացիութան հեղափոխության նոր աստիճանը: Գյուղը «բուռն-տերից» անցավ զինված ապստամբության, թեև անբավարար կազմակերպված, առանց միասնական ղեկավարության և ստրատեգիկական պլանի:

Շարժման այս բարձրագույն ձևի կողքին շարունակվում էլին, սակայն, և նախկին ձևերը — ավերումն, հրձիգություն, կալվածատիրական հողերի գրավում, վոչ-գյուղացիական հողերի ինքնակամ հերկում և այլն:

«1906 թվի «ավերումի» շարժումը — մատնանշում է ընկ. Շեստակովը — անցնում էր ամենուրեք գրեթե նույնպես, ինչպես և 1905 թվի աշնանը: Վառվում էլին շենքերը, բնակարանները, գույքը վոչնչացվում էր, կալվածատերերը փախչում էլին, գործերը «հանգստացնում»: Յեվ դարձյալ ամենախոշոր ավերումները տեղի ունեցան կենտրոնական Սևահող շրջանում: Վորոնեժի նահանգում գյուղացիները քանդում էլին կալվածները ամբոխովին, հավաքվելով անազանգի հրավերով, սայլերով, տանելով գրավված գույքը: Որական այստեղ վոչնչացվում էր 5-ից մինչև 10 անտեսություն: Իշխ. Որլովների շաքարի գործարանում տեղի ունեցավ կատարյալ պատերազմ կողակների հետ, վորոնցից շատերը սպանվեցին ու վիրավորվեցին: Վորոնեժի նահանգում 1906 թվի ընթացքում ավերվեց մինչև 80 կալված: Որլով-Դավիդովների հայտնի ձիաբուծարանից գյուղացիները փախցրին մինչև 800 ձի: Կալվածների հրաձգություն տեղի ունեցին Ռյազանի, Տուլայի, Որյոլի և Կուրսկի նահանգներում, սակայն 1906 թ. գյուղացիական շարժման ամենալայն ձևն էր — չքավոր գյուղացիության «գործադուլները»: Նրանք գործադուլում էլին գրեթե ամենուրեք, մանավանդ այն շրջաններում, ուր հողը կապալով էր տրվում. մի շարք նահանգներում այդ «կապալային գործադուլները» կրում էլին յերկարատև ու համառ բնույթ: Նրանք կապվում էլին կալվածատիրական

անտեսությունների բոլորտի, ծառաներին՝ անտեսություններից դուրս վտարելուն և յեկվորներին վարձվել թույլ չտալու հետ: Շարժման այս ձևը մշակվում էր գրեթե տարերային թափով: Սովորաբար սկսվում էր նրանից, վոր գյուղական կամ վոլոստի ժողովում նշանակվում էլին կապալի այս կամ այն գները և աշխատավարձի չափը»:

## V. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՄԸ

1907 թիվը

Յեթե 1907 թվի հունվար-ապրիլին հողային շարժումը նկատվում է Յեվրոպական Ռուսաստանի 44 գավառներում (բոլոր գավառների 8,8%), մայխ-ոգոստոսին շարժումը ընդգրկում է արդեն 28 գավառ (5,6%), իսկ տարվա վերջին յերրորդին «անկարգությունների» յենթակա յեն միմիայն յերեք գավառ (0,6%):

Յերկու փայլուն վերելքներից հետո —

Գյուղացիական հեղափոխության հոգևոր 1905 թվի ուշ աշնանը և 1906 թ. ամառը — գյուղացիական հեղափոխությունը անընդհատ ցած է գլորվում: 1907 թիվը — «գյուղացիական պատերազմի» անկման, հոգևոր յարին է: Այդ շրջանում գյուղացիական շարժման ձևերը ևս իջնում են՝ մասսայական գործողություններից գյուղացիները անցնում են առանձին անհատների գործողությունների, գաղտնի հրձիգությունների: 1907 թվի գարնանը, ըստ ապահովագրական վիճակագրության տվյալների, տեղի յեն ունեցել յերկու անգամ ավելի հնդեհներ, քան 1906 թ. գարնանը:

Գյուղացիական շարժման սովորական, ամենից ավելի տարածված ձևն էր 1907 թվին գործադուլը: Գյուղական գործադուլներ այդ թվին տեղի յեն ունեցել 28 գավառներում — ամենից ավելի Հարավ-Արևմտյան շրջանում, սակայն այդ գործադուլները վոչ ըստ իրենց համառություն

ու վոչ ել ըստ լայն մասսակայնության չեն կարող համեմատվել նախընթաց յերկու տարիների գործադուլների հետ:

Կառավարութունը լեցնում է բանտերը հարյուրավոր և հազարավոր ապստամբներով: Միևնույն ժամանակ կուլակներն ու ունևոր շերտերը, ստույգաբան հողային որենքների շնորհիվ հեռանում են շարժումից: Այսուհետև կուլակները պետք է հանդիսանան ցարիզմի նեցուկը գյուղում: Իսկ ինչ վերաբերում է քաղաքներին, այնտեղ հեղափոխությունը ավելի ևս առաջ եր խեղդված և 1905 թ. դեկտեմբերյան ապստամբության ճնշումից հետո — անզոր եր արագ հասնելու: Թվում էր թե ցարիզմը կարող է տոնել իր հաղթանակը իրեն այնքան սարսափացրած հեղափոխության վրա...

### VI. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՒՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1905 — 07 թվերի գյուղացիական շարժման հանրագումարը կազմելիս, անհրաժեշտ է մատնանշել, վոր չնայած իր բոլոր թուլություններին, նա աչքի յեր ընկնում գորեղ համառությամբ ու մասսաների լայն ընդկրգումով, մանավանդ իր բարձրագույն վերելքի շրջաններում — 1905 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին և 1906 թվի մայիս-հոկտեմբերին:

Այդ շրջանում շարժումը ընդգրկել էր Յեվրոպական Ռուսաստանի 297 գավառները և դրանցից 161 գավառում շարժում կրկնվել էր առնվազն յերկու անգամ: Որինակ, Հարավ-Արևմտյան շրջանում հուզմունքները կրկնվել են գավառների 83%-ում, մյուս շրջաններում կրկնակի հուզմունքները մի քիչ պակաս են՝ Հյուսիս-Արևմտյանում — գավառների 63%-ում, Կենտրոնական-Յեվրոպործականում — 58% և այլն:

Շարժման ձևերը

Շարժման վեր ձևերը գերակշռող ելին 1905 — 07 թվերի ընթացքում: Այդ հարցին պատասխանում է հետևյալ աղյուսակը.

Շրջանների անունները	Գավառների ընդհանուր թիվը	Շարժման յենթակազմի թիվը	Անտ. ինքն. կտրում	Ինքն. արածացվ. ու խորտի գրավում	Հացի գրավ. հարկերից	Գավառների թիվը		Կապիտալի շարժումը	Դասակարգումը
						Ինքն. հերթում	Ավել. լում		
Կենտր. Աևհող	75	68	45	47	18	7	54	28	46
Միջին Վոլգայի	51	45	39	26	14	18	30	12	16
Ստորին »	17	9	6	7	2	4	7	4	1
Նովոռոսիյսկի (Աջափյան Ուկր.)	39	32	16	13	7	17	19	22	17
Հարավ-Արևմտյան	36	35	19	22	5	8	9	8	31
Մալոռոսիյսկի (Չախափյան Ուկր.)	41	41	28	29	11	5	26	26	35
Կենտր.-Արդյունաբ	71	45	38	19	—	7	4	3	8
Բելոռուսիյսկի	43	39	33	6	—	5	6	—	15
Մերձ-Ուրալյան	29	11	10	2	—	—	1	—	—
Հյուսիսային	19	9	9	2	—	1	—	2	1
Մերձկասկի	34	23	20	12	2	2	3	4	10
Հիստովսկի	23	17	13	10	2	4	—	—	14
Ընդամենը	478	374	276	195	61	78	159	109	204

Ինչպես տեսնում ենք, շարժման գերակշռող ձևերը միատեսակ չեյին բոլոր շրջաններում: Կենտրոնական սևահող նահանգներում գերակշռում էյին ավերումները, քանդումները (76,5%), ինքնակամ արածում ու խոտի գրավումը (69,1%) և, վերջապես, գործադուլները (67,6%): Ստորին-Վոլգայան նահանգներում առաջին տեղն են գրավում նույնպես քանդումները և ինքնակամ արածացնելը (77,8%), ապա գայիս և անտառների ինքնակամ կտրելը (66,7%): Քայքայման շարժումը լայնորեն տարածված էր և մի շարք այլ շրջաններում — Միջին Վոլգայի, Ուկրայինայում: Հա-

րավ-Արևմտյան շրջանում, ինչպես արդեն մատնանշված է, գերակշռում էր շարժման համեմատաբար չափավոր ձևը — գործադուլը:

Հասկանալի պատճառներով ինքնակամ կտրումի ձևը տարածված էր գլխավորապես անտառներով հարուստ շրջաններում — Հյուսիսային (100%), Մերձ-Ուրալյան (90,9%), Մերձկասպյան (87%) և այլն:

Շրջանների տարբերվելը շարժման ուժ-  
Շարժման ձե- գնության, լարվածության ու թափի, այլ և  
վերի կախումը շարժման ձևերի տեսակետից միանգամայն  
երջանի սիստե- հասկանալի կդառնա, յեթե գյուղացիական  
սական կարգից հուզմունքները կապենք այս կամ այն շրջանի  
տնտեսական կարգերի ու դրության հետ:

Կենտրոնական սևահող շրջանում, ուր իշխում էր «ոտ-  
րաբուսականների» սիստեմը և «խսպողչինան», կոբիլը, բնա-  
կանաբար, պետք է տարվեր գյուղացիության լայն մաս-  
սաների անողոք շահագործման այդ վայրագ, անտանելի  
միջոցների դեմ: Բնական է, վոր հենց այստեղ շարժումը  
պետք է ստանար ամենից ավելի սուր, կտրուկ ձևերը,  
վոր և տեսնում ենք իրականում:

Կենտրոնական-յերկրագործական շրջանի գյուղացի-  
ները տանջվում էին գյուղատնտեսության կատարյալ ան-  
կումից, գյուղերում հավաքված ավելորդ բանվորական  
ուժից ու անայնագործական արհեստների անկումից, վո-  
րոնք վտարվում էին խոշոր արդյունաբերության կողմից:

Գյուղացիական ընդարձակ շարժման յերկրորդ շրջանն  
էր հարավը (Ուկրաինական նահանգները, Դոնի շրջանը,  
Կուբանը): Այս դրությունը մի քիչ այլ էր, քան թե կեն-  
տրոնում: Այստեղ մինչ-կապիտալիստական շահագործումը,  
մինչ-կապիտալիստական ռենտան (կալվածատերերի այն  
յեկամուտը, վոր նրանք ստանում էին գյուղացիներից՝  
սրանց իրավունք տալով հողը ոգտագործելու) համեմա-  
տաբար թույլ էր տարածված:

Ռուսաստանի հարավում գյուղացիական տնտեսու-  
թյունը դեռ մինչև 1905 թվի հեղափոխությունը կանգ-  
նած էր կապիտալիզմի ուղու վրա: Այդ հաստատվում է  
գյուղատնտեսական մեքենաների հարավային շրջանները  
ներմուծելու տվյալներով: 1891-ից մինչև 1895 թիվը նո-  
վոռոսիա ներմուծված է 2.321, 3 հազար փութ գյուղա-  
տնտեսական մեքենաներ ու գործիքներ, իսկ 1896 թիվից  
մինչև 1900 թիվը գյուղատնտեսական մեքենաների ներ-  
մուծումը այդ շրջանը հասնում է արդեն 2.395, 9 հազար  
փթի, այսինքն 74.600 փթով ավելի: Դոնի շրջանում մի  
գործիքը ընկնում է 5,1 հոգու: «Վեստնիկ Ֆինանսով» թերթը  
հաղորդում է 1897 թվին, թե «կալսամեքենաների ձեռք-  
բերումը վերջին ժամանակներս ստացել է արդյունաբե-  
րական բնույթ: Յեղել են դեպքեր, յերբ 2—3 բերրի տա-  
րիների ընթացքում ձեռնարկողը լիովին արդարացնում է  
կալսիչի ու լոկոմոբիլի ծախսը ու անմիջապես ձեռք է  
բերում նորը նույն պայմաններով: Այդպիսով, Կուբանի  
շրջանի վոչ այնքան խոշոր տնտեսություններում կարելի  
յե հաճախ պատահել մինչև հինգ, նույնիսկ մինչև տասը  
այդպիսի մեքենաներ»:

Գյուղացիական շարժումը հարավային շրջանում հիմ-  
նված էր պայքարի վրա կալվածատիրոջ դեմ, իբրև կոն-  
կուրենտի ու հացի շուկայի մոնոպոլիստի: Կալվածա-  
տերը անասելի չափերով բարձրացնում էր հողի գները և  
իր արտոնյալ դրության շնորհիվ խեղդում էր նույնիսկ խո-  
շոր ցանքատեր-գյուղացուն:

Գյուղացիությունը ձգտում էր թոթափել իր ուսերից  
կալվածատիրոջ ճնշող լուծը — սա յեր, պայքարի ամբողջ  
ընթացքին, հողային շարժման բնորոշ գիծը:

## VII. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ

Վերև շեշտված գիծը հեշտությամբ կգտնենք գյուղա-  
ցիական բոլոր խնդրագրերի ու նախագիտերի, գյուղացիական

մասսաների բոլոր պահանջների մեջ, եւ չխոսած գյուղացիութեան անմիջական «ուղղակի գործողութիւնները» մասին հեղափոխական տարիներին:

Ի՞նչ եր ուզում գյուղացիութիւնը: Ինչպիսի պահանջներ եր առաջադրում նա հանուն «ամբողջ հողի» ու «ամբողջ ազատութեան» մղված կռիւի պրոցեսում:

Պետիցիաները, իբրև դիմումներ ցարին իրենց կարիքների մատնանշումով գյուղացիական խնդիր-պահանջների սկզբնական ձևն էին: Այդ պետիցիաների կամպանիան առանձնապես լայն զարգացում ստացավ 1905 թ. փետրվարի 18-ի ուկազից հետո, վորով գյուղացիներին թույլատրվում էր դիմել անմիջապես գերագույն իշխանութեանը «պետական բարեսարքման կատարելագործութեան ու ժողովրդական բարեկեցութեան բարելավման» խնդիրներով: Այդ «գերագույն հրամանը» տեղերում այնպես եր մեկնաբանված, թե գյուղացիներին թույլ ե տրվում ընդհանուր ժողովներում (սխոզներում) քննութեան առնել իրենց դրութիւնը և խնդիր հարուցել իրենց ծանր վիճակի բարելավման այս կամ այն միջոցների մասին: 1905 թվի գարնանը բոլոր գյուղերով անցավ այդորինակ սխոզների ալիքը. այդ սխոզների արդյունքն եր մոտ 60 հազար պետիցիաներ-խնդրագրեր: Այդ պետիցիաների ազդեցութիւնը կայանում եր նրանում, վոր նրանք միացնում, համախմբում էին գյուղը, բայց միևնույն ժամանակ նրանք ըստ եյութեան ապացուցում էին գյուղի դեռևս չվերացված քաղաքական յետամնացութիւնը: Հեղափոխութեան այդ «պետիցիոն» ետապին գյուղացիութիւնը դեռ չեր ազատվել հողը ցար-բատուշկայի ձեռքիցը ստանալու հույսից: Գյուղացիութեան հեղափոխական յեռանդը դեռ նիրհում եր: Ահա, որինակի համար, Չերնիգովի նահանգի, Նովոզիբկովսկի գավառի կարպովիչ գյուղի գյուղացիների պետիցիան: Այդ պետիցիայի մեջ գյուղացիները թվում են իրենց աղքատացման

զանազանակերպ պատճառները: Առաջին տեղը — դիվանագիտական նկատառումներով — նրանք հատկացնում են խավարին, մասսաների կուլտուրական յետամնացութեանը.

«Մեր աղքատութիւնը, մեր անտանելի կացութիւնը, վոր կայանում ե նրանում, վոր մեզ շահագործում են բոլորը, ով չի պատկանում մեր դասին, խոշոր չափերով բացատրվում ե մեր խավարամտութեամբ, մեր անլուսավորութեամբ: Դրա շնորհիվ չինովնիկները վարվում են մեր միջոցների ու մեր ազատութեան հետ ըստ իրենց քմահաճույքին» — այս խոսքերով ե սկսվում պետիցիան: Դրանից հետո գյուղացիները պահանջում են «վերացնել դեմսկիյ) նաչալնիկներին, ստրաժնիկներին և ուրյազնիկներին», վերացնել ամեն մի խնամատարութիւն (ոպյոկա) գյուղացիների վրա, հաստատել բոլորի հավասարութիւնը որենքի առաջ, պակասեցնել տուրքերը: Յեւ վերջապես, բավականաչափ յերկար ներածութիւնից հետո, հայտնում են հիմնական, ամենանվիրական նպատակը — խլել, ցարի ոգնութեամբ, հողը կալվածատերերից ու դա բաժանել գյուղացիների մեջ»:

«Մեր աղքատութիւնը ու որեցոր աճող կարիքավորութիւնը առաջ են գալիս վոչ միայն մեր մթութիւնից, ինչպես մատնանշված ե առաջին կետում, — շարունակում են գյուղացիները, — կա և յերկրորդ, վոչ պակաս նշանակալից պատճառ. դա — հողի պակասութիւնն ե: Ուրախ ենք աշխատելու, բայց տեղ չկա: Միևնույն ժամանակ մենք տեսնում ենք, վոր հողը չմշակող մարդկանց, այսպես կոչված կալվածատերերի մոտ գտնվում են անագին քանակով հողեր: Մենք անհրաժեշտ ու արդարացի յենք համարում, վորպեսզի հողը պատկանե նրան, ով մշակում ե հողը, ուստի և համարում ենք, վոր անհրաժեշտ ե գնել կամ խլել հողը կալվածատերերից ու տալ նրան մեզ, վոր հող չունենք, բայց աշխատել ուզում ենք: Պետք ե տալ այնքան, վորքան մարդ կարող ե մշակել, և այլն պայմա-

նով, վոր մարդ ինքը նրան մշակե, այլ վոչ թե կապալով տա կամ ծախե: Արա՛ այդ, ցար-բատյուշկա»:

Այս ձևով են կազմված և այլ նահանգների գյուղացիների դիմումները:

Ահա Տվերի նահանգի, Նովոտորժսկիյ գավառի գյուղացիական սխողի դիմումը.

«Դյուղացիներին նեղում են կրթության գործում: Մեր դպրոցներում չկա ազատ ու բնական կրթություն: Մեր յերեխաների համար անհասանելի յեն բարձրագույն դպրոցները. մեզ մոտ չեն թողնում լավ գրքեր ու թերթեր: Մենք զրկված ենք դպրոցական գործերի վարչությանը մասնակցելու իրավունքից: Բայց մենք ուզում ենք ավելի իմանալ. մենք ուզում ենք տալ մեր յերեխաներին իսկական կրթություն, ուստի և պահանջում ենք թե՛ տարրական և թե՛ միջնակարգ ու բարձրագույն ձրի կրթության լիովին ազատություն ու մատչելիություն, դպրոցների, գրադարանների, կրթական ընկերությունների բացման ազատություն և ժողովրդական լուսավորության գործի հանձնումը ժողովրդի ընտրյալներին: Տարրական կրթությունը պետք է լինի ընդհանուր, պարտադիր ու ձրի»:

Պետիցիայի առաջին կետին հետևում են յերկրորդը, յերրորդը— դասերի անհավասարության վոչնչացման, անուղղակի տուրքերի վոչնչացման մասին: Հիմնական կետն է չորրորդը— հողի մասին:

Մենք պահանջում ենք բոլոր հողերը դարձնել պետության սեփականություն

— Մենք պահանջում ենք մասնատիրական, պետական, արքունական, վանքապատկան ու յեկեղեցական հողերը դարձնել պետության սեփականություն՝ գյուղացիների ու յերկրագործական աշխատանքով պարապել ցանկացողների մեջ հավասարաչափ բաշխելու համար:

Ահավասիկ մի վոչ թե պետիցիա, այլ ուղղակի «հողու կանչը» (իրենց իսկ բնորոշումով) Սլավյանասերբսկիյ շրջանի գյուղացիության՝

«Մեր ուժը հատնում է: Մենք ծանրաբեռնված ենք ուժից վեր տուրքերով. մենք քայքայվել ենք, մնացել հողագուրկ: Ոգնիր, թագավոր: Ականջ դիր մեր ձայնին, մեր ցավատանջ հոգու, հյուժված մարմնի կանչին: Արագացրու ջոռգնությունը, ազատե մեզ ներկա իրավազրկությունից, մեր հոգեկան լքվածությունից, վրկե սովից ու այն քամբախտ տնտեսությունից, վոր տաժանակիր աշխատանքից ել վատ է: Կարգադրիր, թագավոր, անմիջապես կանչել մեր ներկայացուցիչներին, վոր մենք կընտրենք ազնվաբար ընդհանուր, հավասար, գաղտնի քվեարկությամբ (հոգ չե, վոր մեր մեջ կլինեն այլ կրոնի ու ազգության մարդիկ), վորպեսզի դեպի այդ ընտրյալները հակված լինի մեր սիրտն ու վստահությունը»: Պետիցիան վերջանում է խոնարհ դիմումով ցարին՝

«Դու ինքտ ել գիտես, թագավոր, միթե կգտնվի՞ մի հայր, վոր հացի փոխարեն քար տա իր վորդուն ու ձկան փոխարեն— ոձ, իսկ դու — դու ցար-բատյուշկա յես»:

Այս պետիցիան կարող է համարվել շատ տիպիկ՝ հեղափոխության առաջին շրջանի գյուղացիական տրամադրությունների համար: Նույնիսկ Սարատովի նահանգում, ուր շարժումը համեմատաբար կազմակերպված եր, գյուղացիները իրենց պահանջների մեջ յերկար ժամանակ խոնարհ խնդիրներից ու ցարին և կամ նույնիսկ միխիստրներին ուղղված դիմումներից դենը չեյին անցնում:

Ահա, որինակ, ինչ էյին գրում Բալաշովի գավառի գյուղացիները՝

«Մեր ընտանիքները պահելու համար ստիպված ենք վերցնել հողը վաճառականներից ու կալվածատերերից, իսկ կապալագիրնը աճում է որ որի վրա: Այս տարի գինը հասել է 20 ուրբուր գեսյատիսից: Այդչափ բարձր գինը հողը չի կարող արդարացնել: Ինչպես ապրել, ինչով հարկերը վճարել ու ինչով կերակրվել— չգիտենք: Պատերազմը խլում է մեր աշխատավորներին ու մեզ կերակրողներին»:

Իսկ պատերազմը վերջանալուց հետո պետք է սպասել նոր տուրքերի ու ապրանքների թանգության. հյուժված հողը տարեց տարի պակաս ու պակաս է բերում ու մենք, մեր ագիտության շնորհիվ, անգոր ենք վորևե կերպ մեզ ոգնելու:

Կողմնակի աշխատանք մոտ շրջաններում նույնպես չկա: Մենք կարծում ենք, վող արդարացի կլինեք վերջ տալ հողի առևտրին — հողը պետք է պատկանե նրան, ով աշխատում է նրա վրա ու կերակրվում նրանով:

Մեր յերկրորդ դժբախտությունն է մեր խավար վիճակը, մեր ագիտությունը... Բացի դրանից, մենք ցանկանում ենք, վորպեսզի մեզ համար արգելված չլինեն գրքերն ու լրագրները... Այլև ցանկանում ենք, վոր թույլ տրվի թերթերի մեջ գրել ազատ ամեն ինչ, ինչպես ընդունված է վաղուց ի վեր ոտար յերկրներում:

Մեր յերրորդ կարիքն է — մեր իրավագրկությունը ու մեծ թվով նաչալնիկները, վոնոնցից մենք ավելի նեղությունն ու վերավորանք ենք կրում, քան արդարությունն ու պաշտպանությունն ստանում»:

Այս պետիցիայի մեջ, ինչպես և վերև բերված մյուս պետիցիաների, գյուղացիները չեն պահանջում հին կարգերի տապալումը, միապետության վոնչնչացումը, չեն առաջադրում կալվածատիրական հողերի լրիվ ու ձրի գրավման լոգունգը, դեմոկրատական հանրապետության լոգունգը:

1905 թվի աշնանը, հեղափոխության քաղաքներում ունեցած հաշոդությունների ազդեցության տակ, գյուղացիությունը խոշոր քայլ է անում առաջ: Նրա վորոշումների մեջ արդեն կարելի յե հաճախ պատահել Սահմանադիր ժողովի գումարման պահանջ՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ու գաղտնի ձայնատվության հիման վրա: Խարկովի նահանգի Սումշիկայի գյուղացիությունը ուղղակի հայտարարում են, թե՛ «մենք միանգամայն կհանգստանանք միմիայն պատգամավորներին, հիշյալ հիմունքների վրա, հրավիրելու դեպքում»:

Մոսկվայի նահանգի, Կոլոմենսկիյ գավառի գյուղացիները պահանջում են նաև վերացնել նահանգապետերին, իսպրավնիկներին ու ամբողջ վոստիկանությունը:

Գյուղացիական հրահանգները (նակագները) մի նոր ավել վորոգեց յերկիրը Պետական Դումայի բացման ժամանակ — 1906 թ. ամառը: Այդ նակագների մեջ գամավորներից 1906 թ. ամառը: Այդ նակագների մեջ ավելի ևս ուժգնորեն ու վճռականորեն կըրկնվում է հողը գյուղացիությանը հանձնելու պահանջը: Բայց միևնույն ժամանակ նրանց վրա գրեթե միշտ զգացվում են մանր գյուղացու, իբրև մանր ապրանքարտադրողի, նախկին յետամնաց, քաղաքականորեն նախի տրամադրությունները:

«Պետությունը պետք է կառավարվի Պետական Դումայով» — գրում է յին իրենց նակագի մեջ Բուզուլուկսկիյ գավառի, Սորոչինսկիյ գյուղի գյուղացիները:

Պարզ հեղնանքով է հնչում գյուղացիների պահանջը — գործադրության առնել Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը:

Ըստ յերկու հեղինակների — Կուզրյավցեվի ու Վասիլյեվի տվյալներին, Սամարայի նահանգի գյուղացիների հիմնական պահանջները դասավորվում են այսպես. — 75 նակագներից, վոր հավաքել և ուսումնասիրել են հիշյալ հեղինակները, հողի պահանջը գտնում ենք 61 նակագի մեջ, «ազատության» պահանջը — 60-ի մեջ, ընդհանուր ներումը (ամիխտիա) — 49-ի մեջ, մահապատժի վերացումը — 31-ի մեջ, ընդհանուր ու ձրի ուսում — 22-ի մեջ, անուղղակի տուրքերի վերացումը և պրոգրեսիվ յեկամատային տուրքի հաստատումը — 19-ի մեջ, դասերի իրավահավասարություն — 15-ի մեջ, ընդհանուր, ուղղակի, հավասար ու գաղտնի ընտրողական իրավունք — 14-ի մեջ, Սահմանադիր ժողով — 13-ի մեջ, արտակարգ պահպանության վերացումը — 8-ի մեջ, տեղական ինքնավարության ռեֆորմը — 8-ի մեջ, դատական ռեֆորմը — 15-ի մեջ, հոգևորականու-

թյան գանձումների վոչնչացումը — 4-ի մեջ: Բուզուլուկ-  
սկիյ գավառի Մեծ Մայլըի գյուղացիները իրենց նահազի  
մեջ գրում եյին՝

«Հիշեցեք, վոր գյուղացին ու հողը անբաժան են:  
Առանց հողի ու ազատութեան մի վերադառնաք մեզ մոտ.  
յեթե դուք չիրականացնեք այն պահանջները, մենք ինք-  
ներս կպնդենք մեր իրավունքների վրա»:

Գյուղացիա-  
կան բուրժուա-  
կան հեղափո-  
խութունը  
Կազմենք հիմնական հանրագումարը:  
Ի՞նչ եր 1905 — 1907 թվերի գյուղացիա-  
կան պատերազմը: Ի՞նչ եր ներկայացնում  
իրենից գյուղացիական հողային ծրագիրը:  
Գյուղացիական նահազները ու մի շարք այլ նյութեր, —  
գլխավորապես գյուղացիութեան ներկայացուցիչների յե-  
լութները I ու II Պետական Դումաներում, — ուշադրու-  
թյամբ ուսումնասիրելուց հետո, Լենինը գալիս է այն յեզ-  
րակացութեան, վոր առաջին հեղափոխութեան շրջանում  
հողային պայքարի ուղն ու ծուծն եյին կազմում ճորտա-  
տիրական լատիֆունդիաները: «Գյուղացիական պայքարը  
հողի շուրջը — շեշտում է Լենինը — նախ և առաջ ու ամե-  
նից ավելի կռիվ եր՝ հանուն այդ լատիֆունդիաների վոչնչ-  
ացման»:

Մանրամասնորեն վերլուծելով Պետական Դումայի  
104 գյուղացիական պատգամավորների հողային նախա-  
զիծը, վորով պահանջվում եր գրավել հողերը հողուտ-  
պետութեան և ապա բաշխել գյուղացիների մեջ, Լենինը  
յեզրակացնում է՝

«Պարզ է, վոր մանր գյուղացու ճնշվածութունը կարվա-  
ծատերերի ճորտատիրական հողատիրութեան կողմից, վոր  
ամենից ավելի ուժեղ ու անմիջականորեն արտահայտված է  
գուտ ուսական յերկրագործական կենտրոնում, զգացվում  
է ամբողջ Ռուսաստանում, առաջացնելով մի կարգ հողա-  
տերերի մեջ ամենուրեք իրենց հողի ազգայնացման հա-  
մար մղվող պայքարին աջակցութուն»:

Այդորինակ ազգայնացումը (նացիոնալիզացիան) Լե-  
նինը անվանում եր հողերի գյուղացիական «գտում» կա-  
պիտալիզմի համար, վորովհետև դա նշանակում եր դասերի  
անհավասարութեան ու ճորտատիրութեան մնացորդների  
պահպանութեան վրա հիմնված ռենտայի ու կապալի ար-  
մատական վոչնչացում: Միևնույն ժամանակ յենթադրվում  
եր, վոր արտագրողական ուժերի հետագա զարգացումը  
գյուղում պիտի կատարվի ֆեոդալիզմի ցանցերից մաքր-  
ված կապիտալիզմի հողի վրա: «Կամ ստալըպինյան հողա-  
յին ռեֆորմը, կամ գյուղացիական հեղափոխական ազգայ-  
նացումը» — գրում եր Լենինը: Սուսը ըստ եյութեան,  
ինչպես մատնանշում եր Լենինը, «ոբյեկտիվորեն հնարա-  
վոր բուրժուական զարգացման» յերկու ճամբաների մա-  
սին եր:

«Առաջին դեպքում ճորտատիրական, կարվածատիրա-  
կան տնտեսութունը դանդաղորեն վերածվում է բուր-  
ժուականի, յունկերականի, դատապարտելով գյուղացինե-  
րին տասնամյակների ընթացքում ամենատանջալից շահա-  
գործման ու ստրուկութեան, ստեղծելով միևնույն ժամա-  
նակ «գրոսսբուրժուների» («խոշոր գյուղացիների») աննշան  
փոքրամասնութուն: Յերկրորդ դեպքում կարվածատիրա-  
կան տնտեսութունը չկա և կամ նա քանգվում է հեղափո-  
խութեան ձեռքով, վորը գրավում է ու մանրացնում ֆեո-  
դալական կարվածները»:

«1905 — 1907 թվերի գյուղացիական պատերազմը  
ընդհանուր առմամբ պատերազմ եր հանուն յերկրորդ  
տիպի զարգացման, հանուն բուրժուական-գեմոկրատական  
հեղափոխութունը մինչև վերջը հասցնելուն»:

Գյուղացիական հեղափոխութունը — ինչպես ուսուցա-  
նում եր Լենինը — բուրժուական հեղափոխութեան ձևերից  
մեկն եր: Գյուղացիական պատերազմը գնահատելիս, բոլ-  
շիկները յելնում եյին նրանից, վոր բուրժուական հեղափո-  
խութեան բոլոր հնարավոր տեսակներից պետք է գերադասել

վերջինը, այսինքն՝ գյուղացիական բուրժուական հեղափոխութիւնը: Միննույն ժամանակ Լենինը շեշտում էր, վոր յուրաքանչյուր գյուղացիական հեղափոխութիւն — բուրժուական հեղափոխութիւն է, բայց վոչ յուրաքանչյուր բուրժուական հեղափոխութիւն գյուղացիական հեղափոխութիւն է:

«Յուրաքանչյուր գյուղացիական հեղափոխութիւն, վոր ուղղված է միջնադարի դեմ հասարակական ամբողջ տնտեսութեան կապիտալիտական բնույթի պայմաններում, — բացատրում էր Լենինը — բուրժուական հեղափոխութիւն է: Բայց վոչ ամեն մի բուրժուական հեղափոխութիւն գյուղացիական հեղափոխութիւն է: Յեթե մի յերկրում, ուր հողագործութիւնը կազմակերպված է միանգամայն կապիտալիտականորեն, կապիտալիտ-հողագործները վարձու բանվորների ոգնութեամբ հողային հեղափոխութիւն կատարեյին, վոչնչացնելով, որինակի համար ասենք, հողի մասնավոր սեփականութիւնը, դա կլինէր բուրժուական հեղափոխութիւն, բայց վոչ յերբեք գյուղացիական հեղափոխութիւն: Յեթե մի յերկրում, վորի հողային կարգերը այնքան են արդեն ձուլվել ընդհանուր կապիտալիտական տնտեսութեան հետ, վոր վոչնչացնել այդ կարգերը անհնար է առանց կապիտալիզմը վոչնչացնել, տեղի ունենար հեղափոխութիւն, վոր իշխանութեան ղեկը հանձնէր, ասենք, արդյունաբերական բուրժուազիային — միապետական բյուրոկրատիայի փոխարեն, — դա կլինէր բուրժուական հեղափոխութիւն, բայց վոչ յերբեք գյուղացիական հեղափոխութիւն»:

Գյուղացիական բուրժուական հեղափոխութեան ուսմունքի հետ սերտ կապված է բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան շարժիչ ուժերի բոյլշևիկական գնահատումը, գյուղացիութեան դերի բոյլշևիկական գնահատումը դեմոկրատական հեղափոխութեան մեջ:

## VIII. ԱՍԵՆԻՑ ԱՌԱՋ — ԿԱՐԳ ՌԻ ԿԱՆՈՆ

Ա.ՋԵՐԸ, ՈԿՏՅԱԲՐԻՍՏՅՆԵՐԸ, ԿԱԴԵՏՆԵՐԸ

Բանվոր դասակարգը, ի դեմս բոյլշևիկներին, ձգտում էր, բնականաբար, ուղղել գյուղացիական հեղափոխութիւնը դեպի անհրաժեշտ հունը: Սակայն բուրժուական ու մանր-բուրժուական կուսակցութիւնները իրենց հերթին, նույնպես ձգտում էին իշխել «գյուղացիական տարերքին»: Ամբողջ հեղափոխութեան ընթացքում շարունակվում էր, յեթե կարելի յէ այսպես արտահայտվել, պայքար գյուղացիութեան համար:

Իշխող դասակարգերի համար առանձնապէս կրիտիկական մոմենտներին գյուղացիութեանը փորձում էին հաճելի դառնալ նույն լսկ այնպիսի դահիճներ, ինչպիսին էր Ռուսաստանի փաստացի դիկտատոր, պալատային կոմենդանտ գեն. Տրեպովը:

«Յես ինքս կարվածատեր եմ, — ասում էր նա Մինիստրների Սորհրդի նախագահ Վիտտեյին, — և անչափ ուրախ կլինեմ ձրիաբար տալու իմ հողերի կեսը, յեթե հավատացած լինեմ, վոր միայն այդ պայմանով յես կկարողանամ պահպանել ինձ համար մյուս կեսը»:

Այսպիսի առաջարկներ — ձրիաբար տալ գյուղացիներին կարվածատիրական հողերի մասը, մյուս մասը իրենց պահպանելու համար — այն ժամանակ՝ հոկտեմբերյան ընդհանուր գործադուլի ու դեկտեմբերյան զինված ապստամբութեան մոմենտին — հազվագյուտ չէին: Ծովակալ Դուբասովը — գյուղացիների այդ հայտնի «խաղաղարարը» մի շարք նահանգներում — նույնպես խորհուրդ էր տալիս Վիտտեյին՝ թողնել գյուղացիների ձեռքին նրանց բռնագրաված հողերը:

«Դրանով դուք կհանգստացնեք գյուղացիներին — ասում էր Դուբասովը, — կարվածատերերի համար ել ավելի լավ

կլինի, վորովհետև հակառակ դեպքում գյուղացիները կվերցնեն, կխլեն մասնավոր հողատերերից բոլոր հողերը»:

Նույն այդ ժամանակ մինիստրների խորհրդում ցարի ներկայութեամբ լուրջ քննութեան առարկա ելին կալվածատիրական հողերի մասնավոր գրավման (իհարկե, վճարովի) նախագծերը:

Իսկ տեմբերյան աստամբուլութեան պարտութեան իրապարհական և անհասարակ կալվածատիրական աջ շրջաններում տիրում է նկատելի հանգստութուն — զիջումների մասին այլևս խոսք չկա:

Մի դույլ սառը ջրի ազդեցութուն պետք է գործելին «պարզամիտ մուժիկներին» վրա ցարի 1906 թվի հունվարի 18-ին գյուղացիութեան պատգամավորների ընդունելութեան ժամանակ ասած խոսքերը՝

— «Ուրախ եմ ձեզ տեսնելու, դուք, յե դ բ ա յ ը ն եր, իհարկե պետք է իմանաք, վոր սեփականատիրութեան իրավունքը անձեռնմխելի յե. այն, ինչ վոր պատկանում է կալվածատիրոջը, պատկանում է նրան, այն, ինչ վոր պատկանում է գյուղացուն, պատկանում է նրան: Կալվածատերերի տնտրիութեան տակ գտնվող հողը պատկանում է նրանց նույն անքակտելի իրավունքի հիման վրա, վորի վրա և ձեր հողը պատկանում է ձեզ: Այլ կերպ չի կարող լինել, չի կարող այստեղ վոչ մի վեճ լինել: Յես ցանկանում եմ, վոր այս հայտնեք ձեր համագյուղացիներին: Իմ հոգսերի մեջ յես չեմ մոռանա և ձեզ, գրուղացիներիդ, ձեր կարիքները մոտ են իմ սրտին և յես մշտապես կհոգամ նրանց մասին, ինչպես հոգ եր տանում և իմ հանգուցյալ հայրը: Կհրավիրվի Պետական Դուման ու ինձ հետ միասին նա կխորհի, թե ինչպես լուծել այդ խնդիրը: Ինձ վրա կարող եք հույս ունենալ, յես ձեզ կոգնեմ, բայց, կրկնում եմ, միշտ հիշեցեք, վոր սեփականութեան իրավունքը սուրբ է ու պետք է լինի անձեռնմխելի»:

Յերբ Տոլայի նահանգի Յեփիֆանի գավառի կալվածատերերը, գյուղացիական հողմուկները ազդեցութեան տակ, 1906 թ. հունիսին փորձեցին արտահայտվել հողային ռեֆորմի ցանկալիութեան մասին, նրանք հանդիպեցին անբավականութեան ու անտարբերութեան քարե պարսպի. — Ստոլիպինը արդեն պատրաստել էր հեղափոխութեան լիկվիդացիայի այլ պլան: Սիմբիրսկի նահանգապետ Յաշվիլը, վոր պահանջում էր վորոշ զիճումներ կալվածատերերի կողմից, ստիպված էր հեռանալու: Նույն գեւ. Տրեպովը, վոր 1905 թվի վերջին պատրաստ էր ձրիաբար հանձնելու գյուղացիներին յուր հողերի կեսը, այս անգամ — 1906 թվին այլ կերպ էր գնահատում գրութունը ու հորդորում էր ազատամիտ նահանգապետին՝

«Ինչ պայմաններ էլ լինեն (գյուղացիական աշխատանքի), նրանք գոյութուն ունեն վաղուց ի վեր, իսկ կարգն ու կանոնը պետք է պահպանվեն ինչ գնով էլ լինի»:

Այս վերջին նախադասութունը շատ լավ է բնորոշում աջակողմյան խմբավորումների դիրքը՝

— Վոչ մի զիճում: Կարգ ու կանոն ամենից առաջ: Կալվածատիրական խմբավորումներից այսպես կոչված ոկոյաբրիստները (հոկտեմբերյանները) պատրաստ էին, գյուղացիական շարժման ամենամեծ հաջողութունների շրջաններում, համաձայնել միայն մանր զիջումների, ինչպես են՝ «մանր հողային կապալառման կարգավորումը», «աջակցութունը տեղափոխութեան», «գյուղացիական հողային բանկի գործնելութեան բարեկարգութուն» և այլն:

Ոկոյաբրիստների ծրագիրը թույլատրում էր միայն «պետական կարևորութեան դեպքերում» «սեփականատիրական հողերի մի մասի գրավումը արդարացի վարձատրութեան պայմաններով, հաստատված որենազրականութով»:

Հետագայում ոկոյաբրիստները այդ անմեղ «զիճումները» ևս վտարեցին իրենց ծրագրից:

Իգուր չեր, վոր Վլադիմիր Իլյիչը այսպես եր գնահատում ոկտյաբրիստների դիրքը՝ «Ոկտյաբրիստները արդեն կալվածատերերի ու խոշոր կապիտալիստների դասակարգային կազմակերպությունն էին»:

«Ժողովրդական ազատության կուսակցությունը» (կ.դ.) Մի քիչ տարբեր, սակայն նման դիրքի վրա յեր կանգնած ազդեցությունամբ ամենանշանակալից և ամենից խոշոր բուրժուական կուսակցությունը — «Ժողովրդական ազատության կուսակցությունը» (կադետներ):

«Բուրժուական հասարակության վորևե մեկ վորոշ դասակարգի հետ չկապված — գրում եր այդ կուսակցություն մասին Վ. Ի. Լենինը, — սակայն յուր կազմով, յուր բնույթով, յուր իդեալներով միանգամայն բուրժուական այդ կուսակցությունը աստանվում ե գեմոկրատական մանր բուրժուակիայի ու խոշոր բուրժուակիայի հակահեղափոխական տարրերի միջև: Այդ կուսակցության սոցիալական հենարանն է, մի կողմից, մասսայական քաղքենին..., իսկ մյուս կողմից — լիբերալ կալվածատերը, վոր ձգտում ե... միապետության հետ համաձայնության գալու, «առանց սրտացավության» բաժանելու իշխանությունը ժողովրդի ու ժողովրդին «ասածո վորորմությունը» ճնշողների միջև»:

Կադետները կալվածատերերի ու բուրժուակիայի այն մասի ներկայացուցիչներն էին, վոր կարիք եր զգում ներքին շուկայի լայնացման ու գյուղացիական անտեսություն վճարունակ դառնալուն:

\* Պարզության համար շեշտում ենք, վոր Վ. Ի. Լենինի տված՝ կադետական կուսակցության այս բնութագրությունը յերնում ե այդ կուսակցության դիրքից 1905 թվին: Հետագայում կուսակցության մեջ վերջնականապես գերիշխեցին խոշոր բուրժուակիայի հակահեղափոխական տարրերը: Մրան փայլուն ապացույց — կադետների ղեկավարող գերը հակահեղափոխական շարժումների մեջ 1917 թվից հետո:

Այս կարգի կալվածատերերը տրամադիր էին հանուն անտեսավարություն անվտանգության հրաժարվելու մի քանի արտոնություններից ու նույն իսկ հողերի մի մասից հողուտ գյուղի կիսապրոլետարական շերտերին:

Ազատամիտ ձևացող կալվածատիրոջ այդորինակ տրամադրություններով համակված ե կադետների հողային ծրագիրը, վոր նրանք առաջադրեցին գյուղացիական շարժման յեռուզեռի շրջանում (Պետական Դումայում, իսկ դրանից առաջ գեմատվոյի համագումարում):

Կալվածատեր-կադետները մերժում էին, անշուշտ, հողի ազգայնացման նախագծերը. սակայն նրանք ընդունում էին արքունական, վանքապատկան ու մասնավոր-սեփականատիրական հողերի մասնակի ազգայնացումը, նրանց պետության կողմից գնվելու և սեփականատերերին «արդարացի գնահատումով» վարձատրելու պայմանով:

Այս եր կադետների նախագիծը: Յեթե թողնենք մանրամասնությունները, նա ըստ էություն այնքան ել հեռու չեր անցել ոկտյաբրիստների նախագծից:

«Հողայի «աջ» ու «ձախ» ծրագրերի Յերկու դասակարգերի — կալվածատերերի ու գյուղացիության պայքար հողի համար «բաժանողական գիծը» — մատնանշում եր Լենինը — անցնում ե վոչ ոկտյաբրիստների ու կադետների միջև, ինչպես հաճախ միանգամայն սխալ յենթադրում են մենշևիկները (թույլ տալով խլացնել իրենց «կոնստիտուցիոն-դեմոկրատիկ» բառերի ազմուկով ու փոխարինելով դասակարգային անալիզը կուսակցությունների անունների անալիզով):

Բաժանողական գիծը անցնում ե կադետների ու տրուդովիկների միջև: Այդ գիծը բնորոշում են ոռուս հասարակության յերկու հիմնական դասակարգերի շահերը, դասակարգերի, վոր պայքարում են հողի համար — կալվածատերերի ու գյուղացիության:

Այժմ անցնենք նարոդնիկների ծրագրին:

IX. «ՍՈՑԻԱԼԻՉԱՅԻՄ»... ԱՌԱՆՑ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ

ԵՆԵՍՆԵՐԸ, ՏՐՈՒԴՈՎԻԿՆԵՐԸ, ԵՍԵՐՆԵՐԸ

Ռուս մուծիկի  
«Եսեվր» դի-  
սոդները:  
Ենեսները

Սկսենք այսպես կոչված «ժողովրդա-  
կան սոցիալիստական կուսակցությունից»  
(Ենեսներից), վոր կազմակերպվեց 1906 թ.  
գարնանը մի խումբ գրականագետներից  
(Պեշեխոնով, Մյակոտին և ուրիշները): Իրենց տակտիկա-  
յով Ենեսները շատ մոտ էին լիբերալ բուրժուա-կազետ-  
ներին, բայց վորոշ հաշտություն ունեյին մանր բուրժուա-  
զիայի շրջաններում, իրենց առաջադրած նարոզնիկական  
հողային ծրագրի շնորհիվ:

Վ. Ի. Լենինը այդ կուսակցությանը ավեց հետևյալ  
գնահատումը՝ «Մենք այժմ գիտենք, թե ինչ է նշանա-  
կում լինել աշխատավորական ժողովրդական սոցիալիստ...  
Աշխատավորական—դա նշանակում է՝ քծնել, սողալ «խոզ-  
յայչիկներին» շահերի առաջ, վորոնք ցանկանում են «ստա-  
նալ», բայց «չտալ»: Ժողովրդական—դա նշանակում է՝  
սողալ ժողովրդի միապետական նախապաշարմունքների  
առաջ, մի քանի ազգությունների՝ Ռուսաստանից բաժան-  
վելու շովինիստական յերկյուղի առաջ: Սոցիալիստ — դա  
նշանակում է՝ հայտարարել սոցիալիզմը հեռուները անց-  
նող հեռանկար ու փոխարինել... (սոցիալիստական) ծրա-  
գիրը լայն, ազատ, ճկուն, շարժուն, թեթև, թեթև հազ-  
նված և նույն իսկ բոլորովին մերկ «պլատֆորմով»:

«Գյուղացին ունի բանականություն և նախապաշար-  
մունք, ունի շահագործվող մարդու հեղափոխական ընդու-  
նակություններ և «ստանալ», բայց «չտալ» ցանկացող խոզ-  
յայչիկի ռեակցիոն հակումներ: Պ.պ. պեշեխոնովները գյու-  
ղացի-խոզյայչիկի ռեակցիոն կողմերի գաղափարական ար-  
տահայտիչներն են: Պ.պ. պեշեխոնովները «ռուս մու-  
ծիկի յե ա ե ը գիտողներն են»:

Տրուդովիկները Այժմ ավելի մոտից գնենք նարոզ-  
նիկների հողային ծրագիրը—այսպես կոչված  
աշխատավորական խմբակի ու սոցիալիստ-հեղափոխական-  
ների: Տրուդովիկները — Պետական Դումայի պատգամա-  
վորները, գլխավորապես գյուղացիների կողմից ընտրված—  
իրենց ծրագիրը պարզեցին արդեն հիշված «104-ի նախա-  
գծի» մեջ: Գյուղացիական պատգամավորները յերազում  
էին կազմել «հանրաժողովրդական հողային ֆոնդ» պե-  
տական, արքունական, վանքապատկան ու մասնատիրա-  
կան («աշխատանքային նորման գերակշռող») հողերից:  
Տրուդովիկները ձգտում էին գյուղացիներին բավարարել  
հողով այդ ֆոնդից: Նրանց ուժը կայանում էր շատ սերտ  
կապերի մեջ իրենց ընտրող գյուղացիների հետ, վորոնցից  
անընդհատ ստանում էին նակազներ, նամակներ, դիմում-  
ներ: Կարճ ժամանակամիջոցում (մինչև 1906 թ. հուլիսի  
8-ը) նրանք ստացել էին մինչև 400 նակազ 50 նահանգ-  
ներից, 1500 նամակ, դիմում և այլն: Գյուղացիական  
լայն շերտերի հետ ունեցած այդ կապի շնորհիվ, արուդո-  
վիկները, չնայած նրանց ծրագրի քաղաքական ամբողջ  
խճողվածությանը, Պետական Դումայում համարվում էին  
գյուղացիության ճանաչված ներկայացուցիչներ:

«Տիպիկ արուդովիկը — մատնանշում էր Լենինը — դա՛  
գիտակից գյուղացին է: Նա խորթ չէ միապետության հետ  
համաձայնության գալու մտքին, բուրժուական հասարա-  
կակարգի շրջանակում իր մի կտոր հողի վրա հանդատա-  
նալու, բայց ներկայումս նրա գլխավոր ուժը ուղղված է  
կալվածատերերի դեմ հանուն հողի պայքար մղելուն, պայ-  
քարին՝ ճորտատիրական պետության դեմ, հանուն դեմո-  
կրատիայի»:

«Տրուդովիկների տատնումը կազետների ու բանվորա-  
կան դեմոկրատիայի միջև—գրում էր Լենինը մի այլ աե-  
ղում—անխուսափելիորեն բղխում է մանր տանուտերերի  
գրությունից ու նրանց միացման, կազմակերպման ու

լուսավորութեան հատուկ դժվարութիւնը ստեղծում է արուղորդիկների կուսակցական ծայրահեղ անորոշութիւնը և անձեակերպութիւնը»։ Հենց այդ պատճառով Լենինը հաշվում էր սոցիալ-դեմոկրատների առանձնապես կարևոր խնդիրներից մեկը (սոցիալ-դեմոկրատ այն ժամանակ կոչվում էին և՛ բոլշևիկները, և՛ մենշևիկները) «ուշադրութեամբ հետևել այդ պրոցեսին» և «ուժերը հասածին չափ ազդել նրա վրա պրոլետարական վոգով»։

Մատնանշելով արուղորդիկներին տատանումները, «հեղափոխական բուրժուալի» տարուբերումները, Լենինը, սակայն, պարզ բաժանում էր այդ գործիչներին հակահեղափոխական կադետներից ու գնահատում էր գյուղացիական պատգամներին նրանց վճռական կովի համար միջնադարի, կալվածատերերի, հին իշխանութեան դեմ։

Մեզ մնում է վերլուծել սոցիալիստ-հեղափոխականների հողային ծրագիրը։ Եսերների կուսակցութեան ծրագրի մեջ հողային հարցը, ինչպես հայտնի յե, գրավում էր կենտրոնական տեղը։

Եսերները առաջադրում էին հողի սոցիալիզացիայի լողունգը հավասարաբ հողազտագործման հիման վրա։ «Հողային հարաբերութիւնների վերասարքման խնդիրներում եսերական կուսակցութիւնը ձգտում է հենվել, հանուն սոցիալիզմի ու բուրժուական-սեփականատիրական սկզբունքների դեմ կովելու համար, ուսու գյուղացիութեան համայնական ու աշխատանքային աշխարհայացքների, տրագիցիաների ու կյանքի ձևերի վրա, մանավանդ նրանց մեջ տարածված այն համոզմունքի վրա, վոր հողը վոչ վոքին չի պատկանում և վոր նրանով ոգտվելու իրավունքը տալիս է միայն աշխատանքը։ Հեղափոխութեանգյուղի խնդիրների նկատմամբ ունեցած յուր ընդհանուր հայեցակետների համաձայն, կուսակցութիւնը պնդում է հողի սոցիալիզացիայի վրա, այսինքն՝ հողը պետք է դուրս հանվի ապրանք-

քային շրջանառութիւնից ու առանձին անձնավորութիւնների կամ խմբերի մասնավոր սեփականութիւնից պետք է դառնա համաժողովրդական սեփականութիւն»...

Ապա սոցիալիստ-հեղափոխականները ծրագրի մեջ բերվում են հավասարաբ-աշխատանքային հողազտագործման հիմունքները — անհատական կամ ընկերութիւնների։ Դժվար չէ նկատելը, վոր «աշխատանքային նորման» — հավասարաբ հողազտագործումը — եսերների հողային ծրագրի կենտրոնական կետն է։

Այդ ծրագիրը վերալուծելով, Լենինը գրում էր «մանրբուրժուական սոցիալիստների» «ուեակցիոն անուրջներին» մասին, իսկ սոցիալիստ-հեղափոխականներին անվանում էր «սոցիալիստ-ուեակցիոններներ»։

«Գյուղացիների պայքարը կալվածատերի դեմ ներկայումս հեղափոխական է» — գրում էր Լենինը, — տնտեսական ու քաղաքական եվոլյուցիայի ներկա մոմենտին կալվածատիրական հողերի գրավումը ամեն տեսակետից հեղափոխական է, ու մենք այդ հեղափոխական-դեմոկրատական միջոցը վողջունում ենք։ Սակայն, այդ միջոցը անվանել սոցիալիզացիա, խաբել թե՛ ինքներս մեզ և թե՛ ժողովրդին, իբր թե ապրանքային տնտեսութեան պայմաններում հնարավոր է հավասարաբ հողազտագործում, — դա արդեն ոեակցիոն, մանրբուրժուական ուտոպիա յե, վոր մենք թողնում ենք սոցիալիստ-ուեակցիոններին»։

Լենինը թունավոր հեզնանքի յեր յենթարկում մանրբուրժուական ուտոպիստ-եսերներին, վորոնք յենթադրում էին, թե գյուղացիական հեղափոխութեան բարեհաջող վախճանը բերելու յե նարողնիկական սոցիալիզմի հաղթանակը Ռուսաստանում։

«Իրականում — գրում էր Վլադիմիր Իլյիչը — այդորինակ ընթացքը կնշանակեր նարողնիկական (գյուղացիական) սոցիալիզմի ամենաարագ ու ամենավճռական պարտութիւնը»։

Բայց և այնպես հեղափոխական պայքարի վորոշ շրջանում հողային ծրագրի եսերական սկզբունքները, չնայած նրանց ամբողջ մանր-բուրժուականությանը, արտահայտում էին — ինչպես շեշտում եր Լենինը, — «վոչնչացնող պատերազմ ճորտատիրական լատիֆունդիսների դեմ»:

«Եսերները — ինչպես գրում եր Լենինը մի այլ տեղ — անգիտակից բուրժուական հեղափոխականներ էին: Բայց բանվոր դասակարգը չպետք է զզվանքով յերես դարձնեք գյուղացիական-բուրժուական հեղափոխականությունից: Բանվորը, առանց ձուլելու իրեն վոչ մի այլ դասակարգի հետ, պետք է ամենայն յեռանդով ոգնե գյուղացուն մինչև վերջը հասցնելու այդ բուրժուական հեղափոխությունը»:

\* Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո հրատարակված հողային որենքի հիմքն է այսպես կոչված «սոցիալիզացիան»: Ինչու: «Անցկացնելով հողի սոցիալիզացիայի որենքը — բացատրում եր Լենինը — որենքը, վորի «հողին» հավասարաբար հողոգտագործման լողունգն է, մեծամասնականները լրիվ ճշտությամբ ու վորուշությամբ հայտարարեցին՝ — այս իդեան մերը չե, այդորինակ լողունգին մենք համաձայն չենք, բայց մենք մեր պարտքն ենք համարում անցկացնել նրան, վորովհետև դա գյուղացիների ճնշող մեծամասնության պահանջն է: Իսկ աշխատավորների մեծամասնության գաղափարներն ու պահանջները պետք է նրանք ինքները «արտադրեն» — այդպիսի պահանջները վոչ «փոխել» է հնարավոր և վոչ ել նրանց վրայից վոստնել: Մենք, բոյլշևիկներս, կողմնենք գյուղացիներին ազատել մանր-բուրժուական լողունգներից, վորքան կարելի յե շուտ ու վորքան կարելի յե հեշտ անցնել նրանցից դեպի սոցիալիստականները»: Բոյլշևիկները այդ տակտիկան ամբողջովին ու լրիվ արդարացրեց իրեն: Միևնույն ժամանակ արդարացավ ամբողջովին նարոդնիկների այն դասակարգային բնութագրերը, վոր տվել էին բոյլշևիկները շատ առաջ, քան եսերները վերջնականապես մերկացրին իրենց աշխատավորական լայն մասսաների առաջ: 1917 թվից հետո եսերները անցան բարիկազների մյուս կողմը:

## X. ՌԵՍՍԱՎՐՈՑԻԱՅԻ ՎՏԱՆԳԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏԲ Ե ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑՆԵԼ ՄԻՆՁԵՎ ՎԵՐՁ

ՌԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ ՀՈՂԻ ԱԶԳԱՅՆԱՅՐԱՆ ԴԵՐ ԵՆ

Բոյլշևիկները ու մենշևիկները տարաձայնությունները հողային-գյուղացիական հարցի շուրջը ամենից լավ ու ցայտուն արտահայտված են հողային ծրագրի մշակման առթիվ յեղած վեճերի մեջ, ծրագրի, վոր ընդունված է 1906 թվին կուսակցական IV համագումարում:

1901 թվին Լենինը առաջադրեց հայտնի վեճ հողաբա- կետը՝ հողային ծրագրի մեջ մտցնել պա- փննեքի մասին հանջ — վերադարձնել գյուղացիներին այն հողային հատվածները, վոր 1861 թ. ռեֆորմով լրված էին նրանցից հողատ կալվածատերերի:

Դեռ այն ժամանակ Լենինը հաշվում եր այս ախտը, իբրև առաջին քայլ հողի լրիվ ազգայնացման ուղիով: (Նկատենք, փակագծի մեջ, վոր Լենինի այս հայացքները իրենց ամբողջությամբ պարզվեցին համեմատաբար վոչ շատ ժամանակ առաջ, յերբ լենինյան ժողովածուներից մեկի մեջ գետեղված էին նյութեր Լենինի ու Պլեխանովի տարաձայնությունների մասին կուսակցության 2-րդ համագումարի նախորդակին):

Հողային ծրագրի նախագիծը, «հողահատվածների» կետի հետ միասին, դարձավ կուսակցության պաշտոնական ծրագիրը 1903 թվին — 2-րդ համագումարում:

Հետագայում Լենինը մատնանշում եր, վոր, «բացարձակ մասսայական շարժման (գյուղացիական) բացակայությունը չեթույլատրում այն ժամանակ (հողային ծրագիրը մշակելիս) լուծել խնդիրը ճիշտ տվյալների հիման վրա և վոչ թե ֆուազների, անմեղ ցանկությունների կամ քաղքենիական ցնորքների հիման վրա, ինչպես այն լուծել են եսերները»:

Ի՞նչեկ իսկ  
գրավումն

Իսկ յերբ բացարձակ մասսայական գյուղացիական շարժումը արդեն փաստ էր, անհրաժեշտ էր, բնականաբար, բերաբններ հողային ծրագրերը: 1905 թ. սկզբին բոյլշևիկյան «Վ.պե-րյոդ» («Հառաջ») թերթի համարներից մեկում գետեղված էր հողային ծրագրի նոր նախագիծը, առանց «հողահատ-վածներին» կետի, վորի փոխարեն մի այլ կետ էր մտցված՝ «պաշտպանել գյուղացիների պահանջները — մինչև իսկ կալվածատիրական բոլոր հողերի գրավումը»:

Այդ վոգով տակտիկական բանաձև ընդունվեց 3-րդ համագումարում, վոր և հաստատեց մի անգամ ևս 1905 թ. կուսակցական դեկտեմբերյան կոնֆերանսը: Սակայն, հողային ծրագրի արմատական վերաբնութայունը հետաձգ-վեց մինչև հետևյալ համագումարը (չորրորդ), ուր և այդ հարցը քննութայան յենթարկվեց իր ամբողջ լայնութայամբ ու խորութայամբ:

Նացիոնալի-  
զացիա, մու-  
նիցիպալիզա-  
ցիա, բաժա-  
նումն

Դեռ մինչև համագումարը նշմարվեցին բոյլշևիկները ու մենշևիկները տեսակետ-ները հողային ծրագրի հարցի շուրջը: Առա-ջինը — բոյլշևիկական («հողի նացիոնալիզա-ցիան — ազգայնացումը»), յերկրորդը — Մաս-լովի, վորին համագումարում միացավ Պլեխանովը («մու-նիցիպալիզացիա»):

Մենշևիկական նախագիծը Լենինը համարում էր — 1) վոչ հեղափոխական, վորովհետև նրա մեջը խոսքը վոչ թե ձրի գրավման մասին էր, այլ գրավման առհասարակ և վոչինչ չէր ասված հողային հեղաշրջումը իրակա-նացնելու հեղափոխական միջոցի մասին:

2) Գյուղացիութայան համար անընդունելի, վորովհետև «մունիցիպալիզացիան» նշանակում է՝ նազելնի հողը վերցրու ձրիաբար, իսկ կալվածատիրական հողերի համար կապալ տուր «գեմսավոյին»՝ «հեղափոխական գյուղացիները գրան չեն համաձայնի, նրանք կասեն — կամ բա-

ժանենք բոլոր հողերը մեր մեջ և կամ բոլոր հողերը դարձնենք ամբողջ ժողովրդի սեփականութայուն»:

3) Վնասակար, «յեթե պայմանավորել նրան (Մաս-լովի ծրագրը) «դեմոկրատիզմով» առհասարակ և վոչ հատկապես հանրապետութայամբ ու չինովնիկների ընտրո-ղականութայամբ»:

Հողային հիմնական նախագծերը — Լենինյան ու մաս-լով-պլեխանովյան — շատ ցայտունորեն արտացոլում էին այն ժամանակվա ավելի ընդհանուր տարածայնութայուն-ները սոցիալ-դեմոկրատիայի ներսում, բոյլշևիկների ու մենշևիկների ավելի ընդհանուր տարածայնութայունները կուսակցութայան սարատեգիայի ու տակտիկայի արմատա-կան հարցերի շուրջը:

Մենշևիկները հարցնում էին Լենինին — արդյոք կա-րող է նա յերաշխավորել, վոր հեղափոխութայանը չի հա-ջորդի ռեակցիան, վորը կոգտագործե հողի նացիոնա-լիզացիան:

Լենինը դրան պատասխանում էր, թե՛ ռեստավրա-ցիայի վտանգի դեմ միակ յերաշխիքն է — հեղափոխու-թայունը մինչև վերջը հասցնել և վոչ թե ռեակցիայի հետ սակարկութայան մասնել:

Լենինի նախագիծը «գյուղացիական ապստամբութայան ու բուրժուական-դեմոկրատական հեղափոխութայան լրիվ իրագործման ծրագիր» էր: Իսկ Պլեխանովի նկատողու-թայունը՝ «ռեստավրացիայից յերաշխիքի բացակայութայան» մասին՝ Լենինը անվանում էր «բուրժուազիայի քաղաքա-կան գեները պրոլետարիատի դեմ», «գուտ կադետական գա-ղափար» ու Լենինը հաշվում էր վոչ պատահական փաստ, մունցիպալիզացիան պաշտպանում է Պլեխանովը, վոր այդ մոմենտին յուր «Որագրի» մեջ քարոզում էր կադետներին պաշտպանելու գաղափարը:\*

\* Կուսակցութայան IV (Ստոկհոլմի) համագումարը արտա-հայտվեց հոգուտ ձոնի (Մասլով) — Պլեխանովի հողային նախա-

XI. ՊԵՐՄԱՆԵՆՏ (ԱՆԸՆԴՅԱՏ) ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ  
ԹԵՈՐԻԱՆ

ՏՐՈՑԿՈՒ ԴԻՐՔԸ

Կարո՞ղ եւ արդո՞ք գյուղացիութիւնը լինել պրոլետարիատի դաշնակիցը: Մենշևիկները պատասխանում եյին— վոչ: Նույն սխալը, և մենշևիկների պէս, թույլ եր տալիս և Տրոցկին յուր պերմանենտ (անընդհատ) հեղափոխութեան թեորիայի մեջ: Թե մենշևիկները և թե Տրոցկին հաշվում եյին գյուղացիութիւնը վոչ թե հեղափոխական, այլ ռեակցիոն դասակարգ: Սակայն Տրոցկին տարբերվում եր մենշևիկներից նրանով, վոր նա բուրժուազիան ևս հաշվում եր վոչ-հեղափոխական դասակարգ:

«Հունվարի 9-ից հետո հեղափոխութիւնը այլևս դադար չի ճանաչում» — գրում եր Տրոցկին «Իսկրա»-ի մեջ:

«Հեղափոխութիւնը բարդ և յերբեմն շատ յերկրատե պատմական պրոցես ե, վորի հետևանքով քաղաքական իշխանութիւնը անցնում ե սոցիալական նոր ուժի ձեռքը... Պրոլետարիատի ազգեցութիւնը դեպքերի վրա աճում ե վոչ պակաս արագ... հեղափոխութիւնը առաջ ե քաշում

գծին ու մերժեց բոլոր մյուս նախագծերը, նույն թվում և Լեւինի նախագիծը (Կենտրոնական Կոմիտեյի հողային հանձնախմբի):

Մասլովի նախագիծը հաստատվեց հետևյալ հանգամանքներում.—յերբ քվեարկվում եր նախագծերից մեկը իբրև հիմք ընդունելու հարցը, Մասլովի նախագիծը ստացավ սկզբում միայն 52 ձայն, այսինքն կեսից պակաս: Հողաբաժանման ոգտին տրվեց 40 ձայն (ձայները չբաժանելու համար Լենինը միացավ դրան և միայն կրկնակի քվեարկութեան ժամանակ, Պլեխանովի ձնշումի տակ, անցավ Մասլովի նախագիծը (60 ձայնից ավելի):

Սակայն, վերջնականապես խմբագրված ու ընդունված նախագիծը զուտ-մասլովյան ծրագիրը չեր, վորովհետև Ժորժանիային հաջողվել եր մտցնել մի ուղղում, ըստ վորի՝ «մուսիցիպալիզացիայի համար վոչ բարենպաստ պայմաններում» ընդունվում եր հողերի բաժանում:

պրոլետարիատը առաջին տեղը ու հանձնում ե նրան գերիշխանութիւնը (դեկավարութիւնը):»

Միաժամանակ Պարվուսը, Տրոցկու համախոհը, գրում եր «Իսկրա»-ի մեջ, թե սոցիալ-դեմոկրատները պիտք ե լինեն «բոլորից ավելի հեղափոխական», իսկ «Հեղափոխական ժամանակավոր Կառավարութիւնը Ռուսաստանում պետք ե լինի բանվորական դեմոկրատիայի կառավարութիւն»:

«Առանց ցարի, իսկ կառավարական» — անա այն լողունը, վորով բուքյուեր բանվորական» — անա այն լողունը, վորով Տրոցկին հանդես յեկավ 1905 թվի հեղափոխութեան ժամանակ:

Արդո՞ք կկարողան՞ պրոլետարիատը պահել իշխանութիւնը, յեթե նրան հաջողվի վերցնել այն իրա ձեռքը: «Կկարողանա—պատասխանում եր Տրոցկին,—յեթե ռուս բանվոր դասակարգը ստանա ուղղակի պետական աջակցութիւն յեվրոպական պրոլետարիատից»:

«Ռուսաստանի պրոլետարիատը, յեթե նա իշխանութեան գլուխն անցնի, թեկուզ մեր բուրժուական հեղափոխութեան լոկ ժամանակավոր կոնյունկտուրայի շնորհիվ, կհանդիպի կազմակերպված թշնամութեան համաշխարհային ռեակցիայի կողմից ու կազմակերպված ոգնութեան պատրաստութեան լայն պրոլետարիատի կողմից: Իրա սեփական ուժերին թողնված, Ռուսաստանի բանվոր դասակարգը անխուսափելիորեն կշախշախվի հակա-հեղափոխութեան կողմից այն մոմենտին, յերբ գյուղացիութիւնը յերես դարձնի նրանից: Նրան այլ ճանապահ չի մնալ, քան թե կապել իրա քաղաքական տիրապետութեան վիճակը, հետևաբար և ամբողջ ռուսական հեղափոխութեան վիճակը, Յեվրոպայի սոցիալիստական հեղափոխութեան վիճակի հետ: Այն իսկական պետական-քաղաքական ուժը, վոր կտա նրան ռուսական բուրժուական հեղափոխութեան ժամանակավոր կոնյունկտուրան, նա կձգի ամբողջ կապիտալիստական աշխարհի դասակարգային կռիւ կշեռքին: Պետական իշխա-

նությունը ձեռքին, հակա-հեղափոխությունը թիկունքին, յեվրոպական ուսուցիչական — առաջին, նա կղիմի յուր յեղբայրներին ամբողջ աշխարհում հին հրավերակոչով, վոր այս անգամին կլինի վերջին գրոհի հրավեր — Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

Ինչո՞ւն է այդպիսի ստանալ միայն դրսում, ի դեմս յեվրոպական պրոլետարիատի, յերբ նա իշխանության կգա ու կիրազործե իր մոտ սոցիալիստական հեղափոխությունը:

Յերկրի ներսում պրոլետարիատը դաշնակիցներ չի գտնի: Ավելին — «նա թշնամական բաղխում կունենա վոչ միայն բուրժուազիայի բոլոր խմբավորումների հետ, վորոնք նրան աջակցում էին հեղափոխական պայքարի սկզբնական շրջանում, այլև գյուղացիության լայն մասսաների հետ (ընդգծումը մերն է), վորի աջակցությամբ նա յեկել էր իշխանության»:

Տրոցկու հայացքները խորապես սխալ էլին ու վստահար, վորովհետև «անընդհատ հեղափոխության» իր թեորիայով Տրոցկին փորձում էր «ցատկել» գյուղացիության վրայով, առանց հաշվի առնելու շարժիչ ուժերի իրական փոխհարաբերությունը:

Տրոցկին ազավազեց անընդհատ հեղափոխության սխեման, վոր ավել էր դեռևս անցյալ դարի կեսին կարլ Մարքսը: Ի՞նչ էր հասկանում սոցիալիզմի հիմնադիրը անընդհատ հեղափոխություն ասելով: Անընդհատ հեղափոխություն ասելով, Մարքսը հասկանում էր այնպիսի հեղափոխություն, վորը ամբողջ ժամանակ զարգանում է «բարձրացող գծով», սակայն Մարքսը պրոլետարիատի դաշնակիցների շարքից դեմոկրատական հեղափոխության մեջ դուրս չէր գցում նրա հիմնական դաշնակցին — գյուղացիությունը:

Լենինը պաշտպան էր Մարքսի անընդհատ հեղափոխությանը, բայց վոչ Տրոցկու:

«Դեմոկրատական հեղափոխությունից մենք իսկույն և յեթ կսկսենք անցնել — գրում էր Լենինը — մեր ուժի չափով, գիտակից, կազմակերպված պրոլետարիատի ուժի — կսկսենք անցնել սոցիալիստական հեղափոխության: Մենք պաշտպան ենք անընդհատ հեղափոխության: Մենք կանգ չենք առնի կես ճամբին»:

Նույն միտքը Լենինը կրկնում է մի այլ տեղ՝

«Ներկա հեղափոխության լրիվ հաղթանակը կլինի դեմոկրատական հեղաշրջման վերջը ու սոցիալիստական հեղաշրջման համար վճռական պայքարի սկիզբը: Ժամանակակից գյուղացիության պահանջի իրականացումը, ուսուցիչայի լրիվ ջախջախումը, դեմոկրատական հանրապետության հաղթանակը կլինի բուրժուազիայի և նույնիսկ մանր-բուրժուազիայի հեղափոխականության վերջը, — կլինի սկիզբը իսկական կուլի հանուն սոցիալիզմի: Վորքան ավելի լրիվ է դեմոկրատական շարժումը, այնքան ավելի շուտ, ավելի լայն, մաքուր ու վճռականորեն կծավալվի այդ նոր պայքարը»:

Լենինը սպանիչ հեզմանքով էր վերապահվում Տրոցկու մասին բերվում Տրոցկու «որիգինել» թեորիային, ասելով, վոր նա «խլում է բոլորից դեպի պրոլետարիատի վճռական հեղափոխական պայքարը ու քաղաքական իշխանություն ձեռք բերելը»:<sup>\*</sup>

\* Տրոցկին այժմ էլ չի հրաժարվում «անընդհատ հեղափոխության» իր քաղաքականորեն սխալ ու վստահար թեորիայից: Այդ մասին նա գրում է իր «1905» գրքի առաջաբանում (1922 թ.):

Մի ուրիշ գրքում («Նոր կուրս») Տրոցկին ավելի ևս վճռականորեն նկատում է «... Ինչ վերաբերում է պերմանենտ հեղափոխության տեսությունը, յես վոչ մի հիմք չեմ տեսնում հրաժարվելու նրանից, ինչ վոր գրել եմ այդ առթիվ 1904-5 թվին և ավելի ուշ: Յես այժմ էլ հաշվում եմ, վոր իմ այն ժամանակ զարգացրած մտքերի հիմնական ընթացքը անհամեմատ ավելի մոտ է Լենինիզմի իրական ելույթինը, քան թե շատ ու շատ

XII, ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ  
ԴԱՇՆԱԿԻՑ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ-  
ԴԵՄՈՎՐԱՏԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ—ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԼՈՁՈՒՆԳԸ ԴԵՄՈՎՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒԻՄ

Դեռ հեղափոխութեան հենց սկզբին — 1905 թվի փետր-  
վարին Լենինը առաջադրում էր, իբրև բոյլշևիկներին հիմնա-  
կան խնդիր, անհրաժեշտութեամբ կռիւլ ապստամբութեան  
«հշանակելու» և եակցիոն յերկյուղի կամ պրոլետարիատի ու  
բան նրանից, ինչ վոր գրում էյին այն ժամանակվա մի շարք  
բոյլշևիկներ»:

Ու՛մինսկուն գրած մի նամակում Տրոցկին գրում է «Յեւ  
բոլորովին չեմ հաշվում, վոր իմ տարածայնութեաններին մեջ  
բոյլշևիկներին հետ յեա սխալ էյի բոլոր կետերում... Հաշվում  
եմ, վոր հեղափոխութեան շարժիչ ուժերին իմ գնահատումը ան-  
պայման ուղիղ էր»... Ավելի ևս բացահայտ ու ցինիկաբար Տրոց-  
կին հայտնում է այդ միտքը իր վերջին, արտասահմանում լույս  
տեսած ու կուսակցութեան և Խորհրդային իշխանութեան դեմ  
ստահող բանբասանքներով լի «Իմ կյանքը» գրքում:

Տրոցկին վոչ միայն թերագնահատում էր գյուղացիութեանը,  
այլ և թերահավատ էր բանվոր դասակարգի ուժերին նկատմամբ,  
վորովհետև չէր հավատում (ու չի հավատում) սոցիալիզմի կառուց-  
ման ավարտման հնարավորութեանը մի յերկրում, չէր հավատում  
(ու չի հավատում) պրոլետարիատի ընդունակութեանը՝ ղեկավարել  
գյուղացիութեանը: Այդպիսով, արոցկիզմի եյութեանը կայանում  
է վոչ միայն պրոլետարիատի դաշնակիցներին դերի սխալ գնահատ-  
ման մեջ, վոչ միայն գյուղացիութեան թերագնահատման մեջ,  
այլ և — գլխավորապես — պրոլետարիատի իրա դերի ու նրա ղեկ-  
ատուութեան սխալ բացատրութեան մեջ: Այդ ստիպում է արոց-  
կիզմը համարել մենշևիզմի յուրատեսակ ձևավորումներից մեկը:

Ոպորտունիզմի «ձախ» ձևակերպումը, ինչպես միշտ, բա-  
ցահայտ աջ ոպորտունիզմի ստվերն է միայն: Տրոցկիզմի քա-  
ղաքական բանկրոտութեանը գործնականում մենք ցույց տվինք  
կոպիտ սխալների վրա, մասնավորապես — Պետերբուրգի Բանվո-  
րական Պատգամավորների Խորհրդի, վորի գլուխն էյին անցած  
Տրոցկին ու իր համախոհները:

գյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատական ղեկա-  
տութեան յերկյուղի դեմ, այլ խոսքով՝ մենշևիկներին տակ-  
տիկայի դեմ կռիւլու անհրաժեշտութեանը, քանի վոր  
մենշևիկները ժխտում էյին պրոլետարիատի ու գյուղա-  
ցիութեան յերկարատե դաշնակցութեան հնարավորու-  
թեանը:

Միևնույն ժամանակ, ինչպես արդեն մատնանշված  
է, Լենինը կռիւլում էր և արոցկիստական լոգունգի դեմ՝  
«առանց ցարի, իսկ կառավարութեանը բանվորական»,  
շեշտելով, վոր սոցիալ-դեմոկրատիան միայն կխայտառա-  
կեր իրեն, յեթե փորձեր «անմիջապես իրեն նպատակ  
դնել սոցիալիստական հեղաշրջումը»:

Սրանք, ըստ եյութեան, վեճեր էյին  
վեճեր հեղա- դեմոկրատական հեղափոխութեան շարժիչ ու-  
փոխաւթյան ժերի մասին: Լենինը մատնանշում էր, վոր  
շարժիչ ուժերի մասին  
բուրժուական հեղափոխութեանը կարող է  
տարվել «մինչև վերջը» միմիայն պրոլետա-  
րիատի միութեան դեպքում կիսապրոլետարական մասսա-  
ների հետ, այսինքն՝ քաղաքի ու գյուղի աղքատ մանր-  
բուրժուական մասսաների հետ: Լենինը շատ պարզ շնկում  
է պրոլետարիատի ու գյուղացիութեան հեղափոխական-  
դեմոկրատական ղեկատուութեան պրոլետարիատի սոցիալիս-  
տական ղեկատուութեանը:

Մենշևիկները բացասում էյին բոյլշևիկական ստրատե-  
գիական-տակտիկական պլանը և Լենինին մեղադրում էյին՝  
ուսական հողի վրա... Ժողովրդի բուսցնելու մեջ (թե  
ինչ է ժողովրդի, մենք կտեսնենք հետագայում): Նրանք  
պնդում էյին, թե բոյլշևիկները գլորվել են գյուղացիու-  
թեան, այսինքն, մանր-բուրժուազիայի տեսակետին, վոր  
բոյլշևիկները ստիպված պիտի լինեն յուրացնելու Միլ-  
յերանի գործելակերպը (նախկին ֆրանսիական սոցիա-  
լիստ, վոր հետագայում դարձավ բուրժուական կառավա-  
րութեան մինիստր), վոր զնդակահարում էր բանվորնե-

ըին բուրժուական «Գործադիր կոմիտեյի» մյուս անդամների հետ միասին: Այդ դիրքը — սպառնում էին մենչեվիկները — վերջնականապես կխզե բոլշևիկներին բանվոր դասակարգից ու միևնույն ժամանակ առհավետ կխայտառակե սոցիալ-դեմոկրատիայի տնունը:

Մենչևիկները մատնանշում էին, վոր սոցիալիստների մասնակցութունը կառավարության մեջ բուրժուական դեմոկրատիայի հետ միասին արգելված է Ամստերդամի կոնգրեսի բանաձևով (այդ կոնգրեսը ընդունեց 1904 թ. բանաձև, վոր կապված էր Միլյերանի ֆրանսիական կառավարության մեջ մտնելու հետ, հենց այդ կոնգրեսում Միլյերանի դիրքը պաշտպանեց Ժոռեսը, վոր հեղափոխական սոցիալիստների կողմից առաջացրեց բողոք ու «ժողովի» դատապարտութունը):

Մենչևիկների դատողութունը — ասում էր Վլադիմիր Իլյիչը — «ցույց է տալիս, վոր նրանք լավ անգիր են արել բանաձևերը, սակայն չեն հասկացել նրանց նշանակութունը: Ով վոր ցանկանում է դիալեկտիկական-մատերիալիստական տեսակետից գնահատել ժոռեսի դմը, նա պետք է խստիվ շոկե անձնական մոտիվները որբեկտիվ պատմական պայմաններից: Անհատականորեն Ժոռեսը ուզում էր վրկել հանրապետութունը, դաշինք կապելով դրա համար բուրժուական դեմոկրատիայի հետ: Այդ «փորձի» որբեկտիվ պայմանները կայանում էին նրանում, վոր հանրապետութունը Ֆրանսիայում արդեն փաստ էր և վոչ մի լուրջ վտանգ նրան չէր սպառնում... վոր իրականում բանվոր դասակարգի առաջ որբեկտիվորեն պատմութունը արդեն դրել էր սոցիալիստական հեղաշրջման խնդիրները, վորոնցից յետ էին քաշում պրոլետարիատին միլյերանները սոցիալական մանր բարենորոգումների խոստումով»:

«Այժմ վերցրեք Ռուսաստանը: Որբեկտիվ պայմանները ասրբերվում են ֆրանսիականից, ինչպես յերկինքը

յերկրից: Իրերի որբեկտիվ պատմական ընթացքը ներկայումս դրել է ռուս պրոլետարիատի առաջ հենց դեմոկրատական հեղաշրջման խնդիրը: Պատկերացրեք ձեր առաջ կոնկրետ ձևով որբեկտիվ պայմանների ամբողջ տարբերութունը և ասացեք՝ — ինչ կարծել այն մարդկանց մասին, վոր մոռանում են այդ տարբերութունը, տավելով մի քանի խոսքերի նմանությամբ: Վորովհետև Ժոռեսը Ֆրանսիայում — յեզրակացնում է Լենինը — խոնարհվում էր բուրժուական սոցիալական ռեֆորմի առաջ, ծածկելով իրեն հանուն հանրապետության պայքարի սուբեկտիվ նպատակով, — ապա ուրեմն մենք, ռուս սոցիալ-դեմոկրատներս, պետք է հրաժարվենք լուրջ պայքարից հանուն հանրապետության: Չե՞ վոր սրանում, հենց սրանում է կայանում նոր-խակրովցիների իմաստութունը» (այսինքն, մենչևիկների, վորոնք իրենց ձեռքն էին առել «Իսկրա»-ն, յերբ Վ. Ի. Լենինը նրա խմբագրութունից դուրս էր յեկել):

Մենչևիկները — ինչպես ընդգծում է ՌՎ պեթսիի հեղեմոնը գեմոկրատական հեղափոխական իսկափոխության մեջ

Լենինը — հրաժարվում էին հետևողական հեղափոխական կովից հանուն հանրապետության, հրաժարվում էին դեկավարող դերից հեղափոխության մեջ, թողնելով հեզեմոնիան (իշխող դիրքը) բուրժուազիային:

Մոտակա հեղափոխութունը լինելու յե բուրժուական — դատում էին մենչևիկները, — հետևաբար... Սակայն լսենք մենչևիկի ճանաչված դեկավարներից մեկի — Մարտովի իսկական խոսքերը: «Կամ մենք — ասում էր Մարտովը — դասակարգային կուսակցութուն ենք ու ձգտում ենք քաղաքական իշխանության միմիայն պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայի անմիջական իրականացման համար ու այն ժամանակ մենք պետք է մնանք սկզբունքորեն անհաշտ ոպոզիցիալ՝ ամեն մի կառավարության հանդեպ: Յեվ կամ մենք, վրա հասնող բուրժուական հեղափոխության բազմակողմանի ու հաշող զարգացման մեջ շահագրգռված,

չենք տեսնում նրան աշակցելու այլ միջոց, քան մասնակցել ժամանակակից Ռուսաստանը վերասարքող կառավարութեան մեջ, իբրև մի ղեկավարող կուսակցութիւն»։ «Այն ժամանակ — շարունակում է Մարտովը — մենք վերջ ենք տալիս մեր դասակարգային ընդդիմութեանը ժամանակակից հասարակութեան պրոլետարիատից դուրս կանգնած բոլոր ուժերին, վերցնում ենք մեզ վրա պատմական սահմանափակութեան, բուրժուական հեղափոխութեան բոլոր արդյունքների ուղղակի պատասխանատվութիւնը... Ու վորոշ մոմենտին գտնվում ենք սուր անտագոնիզմի մեջ պրոլետարիատի այն մասսայի հետ, վորի նկատմամբ, չնայած մեր մասնակցութեանը յերկրի կառավարութեանը, իրենց ուժը պահպանում են բուրժուական հասարակարգի բոլոր «իմմանենտ» (ներքին) որենքները, վորոնց անունն է՝ աղքատութիւն, գործազրկութիւն, անհավասարութիւն, անազատութիւն... Կամ-կամ»...

Մենչևիկները նպատակահարմար եյին գտնում մնալ «անհաշտ ոպոզիցիա ամեն մի կառավարութեան հանդեպ», նույն թվում և ամեն մի հեղափոխական կառավարութեան, — և հետևաբար նախորոք համաձայնում եյին՝ այդ կառավարութեան ղեկավարութիւնը առանց կռվի զիճել լիբերալ բուրժուազիային, վոր ձգտում էր իշխել հեղափոխական տարեքրին, — իհարկե, իր դասակարգային նպատակներով։

«Հեղափոխական» լիբերալ-բուրժուական կառավարութեանը մենչևիկները պատրաստ եյին, «ոպոզիցիայի» պաշտոնական դերում մնալով, ամեն կերպ աշակցել, ի դեմս լիբերալ բուրժուազիայի մենչևիկները ուզում եյին գտնել բարեհույս հեղափոխական գաղնակից։

Ահա ինչ էր գրում, որինակ, Մարտովը — «...Մենք իրավունք ունենք հուսալու, վոր հասարակութեան ամենազեմոկրատիկ մասը պետք է գուրս գա, վերջապես, բարյացակամ չեզոքութեան վիճակից ու ոգնութեան հասնի

ապստամբած պրոլետարիատին. հենց այդ պատճառով մենք իրավունք ունենք հուսալու բուրժուական դեմոկրատիայի հեղափոխականացմանը»։ Մարտովը ավելի ևս պարզ արտահայտում է յուր այդ միտքը նույն հողվածում, յերբ շեշտում է, թե՛ «մեր մոտակա խնդիրների դրույթը պայմանավորվում է (բացի պրոլետարիատի պայքարից հանուն իր քաղաքական ինքնուրույնութեան) պրոլետարիատի անխուսափելի հեղափոխական աշխատակցութեամբ բուրժուական դեմոկրատիայի հետ»։

Այսպես, ուրեմն, վոչ թե գյուղացիութիւնը, այլ բուրժուական դեմոկրատիան, — կամ, ավելի պարզ, բուրժուազիան, — ահա — մենչևիկները կարծիքով — պրոլետարիատի դաշնակիցը դեմոկրատական հեղափոխութեան մեջ։

Ընթերցողը հեշտութեամբ կնկատի, վոր մեղադրելով բոյլշևիկներին «ժողեսիզմի» մեջ, մենչևիկները լոկ շուր եյին ծեծում, քանի վոր ժողեսիզմը նշանակում է — ինչպես գրում էր Լենինը — «պրոլետարիատի շահերին անգիտակցաբար դավաճանել, պրոլետարիատին դարձնել բուրժուազիայի պոչ»...

«Մենչևիկմի դիրքը՝ պրոլետարիատի յենթարկումն է լիբերալական ազդեցութեանը», — գրում էր Լենինը մի այլ տեղ։ Իսկ մենչևիկների հիմնական մեղքն էր, վոր կապված էր հեղափոխութեան բնույթի ու նրա շարժիչ ուժերի սխալ գնահատման հետ։

«Մարքսիստների մի մասը — գրում էր Վլադիմիր Իլյիչը մենչևիկները մասին, — դրանց աջ թևը ամբողջ ժամանակ բավարարվում էր բուրժուական հեղափոխութեան ընդհանուր, վերացական, շաբլոն ըմբռնումով, չկարողանալով հասկանալ տվյալ բուրժուական հեղափոխութեան, իբրև գյուղացիական հեղափոխութեան, առանձնահատկութիւնները։

Միանգամայն բնական էր ու անխուսափելի, վոր սոցիալ-դեմոկրատիայի այդ թևը չէր կարող հասկանալ

մեր բուրժուազիայի հակա-հեղափոխականութեան ակունքը  
ուսական հեղափոխութեան մեջ, չէր կարող վորոշել  
պարզորեն, թե վոր դասակարգերը ընդունակ են այդ  
հեղափոխութեան մեջ լրիվ հաղթանակ տանելու, չէր կա-  
րող չկանգնել այն տեսակետին, թե բուրժուական հեղա-  
փոխութեան մեջ պրոլետարիատը պետք է աշակցե բուր-  
ժուազիային, բուրժուական հեղափոխութեան մեջ գործողը  
պետք է լինի բուրժուազիան, հեղափոխութեան թափը  
կթուլանա, յետե բուրժուազիան հեռանա և այլն»:

Բոյլշևիկները, մենշևիկներին տարբեր, այլ կերպ էյին  
գնահատում 1905 — 1907 թվերի դեմոկրատական հեղա-  
փոխութեան առանձնահատկութիւնները և այլ կերպ էյին  
վորոշում պրոլետարիատի ու նրա հեղափոխական դաշնա-  
կիցների խնդիրները:

«Բոյլշևիկները հեղափոխութեան հենց սկզբից —  
1905 թվի գարնանը ու ամառը, յերբ դեռևս խոսք էլ չէր  
կարող լինել ներկայումս տգետ կամ վոչ խելացի մարդ-  
կանց մոտ այնքան տարածված սովորութեան մասին —  
խառնել բոյլշևիզմը բոյկոտիզմի հետ, բոյկոտիզմի և այլն,  
պարզ մատնանշեցին մեր տակտիկական տարածայնու-  
թիւնների աղբյուրը, առանձնացնելով գյուղացիական  
հեղափոխութեան, իբրև բուրժուական հեղափոխութեան  
տեսակներին մեկի, ըմբռնումը ու բնորոշելով նրա  
հաղթանակը — «պրոլետարիատի ու գյուղացիութեան հե-  
ղափոխական-դեմոկրատական դիկտատուրան»:

Իսկ 1905 թ. մարտին, գյուղացիական մասսայական  
շարժման առաջին նշանների ժամանակ, Լենինը գրում էր՝  
«Քաղաքի բանվորական շարժումը նոր դաշնակից ստանում  
հանձինս հեղափոխական գյուղացիութեան: Պրոլետարիատի  
գիտակից ավանդարդի — սոցիալ-դեմոկրատիայի դեպի գյու-  
ղացիական շարժումը վերաբերմունքի հարցը ստանում է  
անմիջական գործնական նշանակութիւն ու պետք է  
մտտակա հերթին որակարգի մեջ դրվի մեր բոլոր կուսակ-

ցական կազմակերպութիւններում, պրոպագանդիստների  
ու ազիտատորների բոլոր յելույթներում»:

Հեղափոխական գյուղացիութիւնը — պրոլետարիատի  
նոր դաշնակիցն է: Այս էր բոյլշևիկների դիրքը դեմոկրա-  
տական հեղափոխութեան մեջ: Արդոյք ամբողջ գյուղա-  
ցիութիւնը պրոլետարիատի դաշնակիցն է: Այդ հարցի  
պատասխանը Լենինի մոտ կապված է առաջին անգամ  
1905 թվին առաջադրած ուսմունքի հետ — բուրժուական-  
դեմոկրատական հեղափոխութեան՝ սոցիալիստականի վե-  
րածվելու, վերաճելու ուսմունքը:

Դասակարգային ուժերի անհրաժեշտ  
Բանվորների ու գյուղացիների դասավորումը դեմոկրատական հեղափոխու-  
միությունը, թյան մեջ վորոշելիս, Լենինը միևնույն  
իբրեւ դասա- ժամանակ վոչ մի բոպե չէր մոռանում դա-  
կարգային կովի առանձ- սակարգերի վերադասավորման մասին՝ այդ  
նահատկ ձեւ հեղափոխութիւնը սոցիալիստականի վերած-  
նել վելու դեպքում ու նախորդ պատրաստում  
էր կուսակցութիւնը ու ամբողջ բանվոր դասակարգը նոր  
խնդիրներին՝ դասակարգային կովի նոր պայմաններում:

«Մենք աջակցում ենք գյուղացիական շարժմանը, —  
գրում էր Լենինը, — վորչափ վոր նա հեղափոխական-  
դեմոկրատական է: Մենք պատրաստվում ենք  
(հենց այժմ, անհապաղ պատրաստվում ենք)  
կովելու նրա դեմ, վորչափ վոր նա դուրս գա  
իբրև ռեակցիոն, հակապրոլետարական (ընդ-  
գծումը մերն է): Մարքսիզմի ամբողջ էյութիւնն  
այս կրկնակի խնդրի մեջ է, վորը պարզացնել կամ սեղ-  
մել մեկ հասարակ խնդրի կարող են միայն մարքսիզմը  
չհասկացող մարդիկ»:

Մի այլ տեղ Լենինը այսպես է բնորոշում պրոլետա-  
րիատի խնդիրները դեմոկրատական հեղափոխութեան մեջ՝

«Գյուղացիական բուրժուազիայի հետ ամեն տեսակի  
ճորտատիրութեան ու ճորտատեր-կապվածատերերի դեմ,

քաղաքային պրոլետարիատի հետ գյուղացիական ու ամեն տեսակի այլ բուրժուազիայի դեմ — այս է գյուղական պրոլետարի ու նրա գաղափարախոս-սոցիալ-դեմոկրատիայի գիծը: Այլ խոսքով — աջակցել գյուղացիութեանը ու ոգնել մինչև «սրբազան» «բարսիլյ» սեփականութեան ամեն տեսակի խլումը՝ վորջան վոր այդ գյուղացիութեանը հանդես է գալիս հեղափոխական-դեմոկրատական նորեն: Վերաբերվել գյուղացիութեանը անվստահ, կազմակերպվել նրանից գատ, պատրաստ լինել նրա դեմ կռվելու՝ վորջան վոր այդ գյուղացիութեանը հանդես է գալիս, իբրև ռեակցիոն և կամ հակապրոլետարական ուժ»:

Վոչ միայն սոցիալիստական, այլև դեմոկրատական հեղափոխութեան մեջ բանվորների ու գյուղացիների միութեանը չի նշանակում, ըստ Լենինի, — ի տարբերութեան ու պորտոնիստական ըմբռնման, — վոչ մի դեպքում բանվորների ու գյուղացիների ձուլումը մի «բանվոր-գյուղացիական դասակարգի» (ինչպես գրում է յին, որինակ, Եսերները), այլ և չի նշանակում պրոլետարիատի՝ ղեկավարող դերի թուլացումը:

«Հեգեմոնի (գերիշխողի) դերը, վոր միշտ մասնանշվում էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի կողմից պրոլետարիատին, բուրժուական ազատագրական շարժման մեջ, — շեշտում էր Վլադիմիր Իլյինը, — պետք յեղավ բնորոշել ավելի ճիշտ, իբրև ղեկավարի դեր, վոր տանում է իր յետևից գյուղացիութեանը: Ո՛ւր է տանում: Բուրժուական հեղափոխութեան համար՝ ամենահետևողական ու վճռական ձևով»:

Իաշնակցութեան ամբողջ գյուղացիութեան հետ դեմոկրատական հեղափոխութեան մեջ, — ուսուցանում էր Լենինը, — դա գյուղացիութեանը ղեկավարելու պայքարի առանձնահատուկ ձևն է և վոչ թե յերկու «խրավահավասար» դասակարգերի միութեան: Իինքնըստինքյան հասկա-

նալի յե, վոր հեղափոխութեան զարգացման պրոցեսում, ինչ չափով վոր դեմոկրատական հեղափոխութեանը բացառիստականի յեր վերածվում, պետք է փոխվեր և «բանվորների ու գյուղացիների միութեան» սոցիալ-դասակարգային եյութեան հասկացողութեանը:

Դեռևս առաջին հեղափոխութեան շրջանում Լենինը նախատեսնում էր կուսակցութեան տակտիկան 1917 թվին, յերբ գրում էր՝ «Պրոլետարիատը պետք է մինչև վերջը տանի դեմոկրատական հեղաշրջումը, միացնելով իրեն գյուղացիութեան մասսան (ընդգծումը մերն է), վորպեսզի ուժով խորտակե միապետութեան ընդդիմադրութեանը ու կասեցնի բուրժուազիայի անկայունութեանը: Պրոլետարիատը պետք է կատարե սոցիալիստական հեղաշրջում, միացնելով իրեն ազգաբնակչության կիսապրոլետարական (ընդգծումը մերն է) տարրերի մասսան, վորպեսզի ուժով խորտակե բուրժուազիայի դիմադրութեանը ու կասեցնի գյուղացիութեան ու մանր-բուրժուազիայի անկայունութեանը»:

Դեմոկրատական հեղափոխութեան շրջանում պրոլետարիատը պլյուս գյուղացիութեանը ուղղում է գլխավոր հարվածը ճորտատեր-կալվածատերերի, միապետութեան դեմ (իբերալ բուրժուազիայի «չեզոքութեան» պայմանում):

Սոցիալիստական հեղափոխութեան շրջանում գլխավոր թշնամին քաղաքի ու գյուղի բուրժուազիան է. հեղափոխութեան շարժիչ ուժերը — պրոլետարիատը պլյուս չքավար գյուղացիութեանը (միջակ գյուղացիութեան «անկայունութեան» պայմանում): Միջակ գյուղացին հետագայում դառնում է պրոլետարիատի դաշնակիցը:

Այս է դասակարգային ուժերի դասավորման սխեման դեմոկրատական ու սոցիալիստական հեղափոխութեան մեջ, վոր առաջին անգամ նշեց Լենինը դեռ 1905 թվին և վոր

հետագայում միանգամայն հաստատվեց յերեք հեղափոխությունների փորձով\*:

\* Աջ թեքումավորները (Բուխարինի — Ռիկովի — Տոմսկոյսումբը) վոչ ըստ Լենինի բացատրում են բանվորների ու գյուղացիների դաշնակցության հասկացողությունը: Նրանք բանվորների ու գյուղացիների դաշնակցության, իբրև գյուղացիության փոփոխման դասակարգային կովի առանձնահատուկ ձևի, լենինյան տեսությունը փոխարինում են «կուլակի՝ սոցիալիզմի մեջ խաղող ներածելու» տեսությամբ: Լենինը տալիս է բանվորների ու գյուղացիների դաշնակցության դիալեկտիկական ընդդրումը յերեք գլխավորագույն շրջանների պայմաններում՝ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության, սոցիալիստական հեղափոխության ու սոցիալիզմի կառուցման: Իսկ աջ թեքումավորները զուտ մեքենայորեն անց են կացնում լոգունգը մի շրջանից մյուս ու դրանով գլորվում են բանվորների ու գյուղացիների դաշնակցության հասկացողության վոչ խորը, վոչ պատմական ու ոպորտունիստական մեկնության:

Բավական է ծանոթանալ ընկ. Բուխարինի հակալենինյան հայացքների հետ՝ «Լենինի քաղաքական պատգամը» նրա ճանհողվածի մեջ: «Մեր սոցիալիստական շինարարության գլխավոր յերաշխիքն է — ասում է Բուխարինը — հողը դասակարգային ուժերի ամենաբարենպաստ դասավորման մասին, վորը կարող է ապահովել սոցիալիզմի հետագա շինարարության հնարավորությունը...»

Հողը «պրոլետարական հեղափոխությունը» «գյուղացիական պատերազմի» հետ զուգելու մասին, նոր ձևով, այս անգամին շինարարական ձևով: Սա յե գլխավորը»:

Ընկ. Բուխարինը համառորեն կրկնում է, թե յերկու հեղափոխությունների կապակցումը — բանվորական ու գյուղացիական — գա յե հոկտեմբերյան նվաճումների փրկության ու հետագա զարգացման միակ պայմանը:

«... Յեթե մեզ մոտ սոցիալիստական հեղափոխությունը զգալի չափերով պահպանվում է դասակարգային ուժերի այն առանձնահատուկ դասավորմամբ, վոր դեռ Մարքսն էր հաշվի առել, — շարունակում է ընկ. Բուխարինը, — պրոլետարական հեղափոխության ու գյուղացիական պատերազմի այդ զուգումը... պետք է շարունակվի ու պահպանվի ինչ գնով էլ լինի,

XIII. ԱԵՐԿՈՒ ՀՈՍԱՆՔ — ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՄՈՒԹՅՈՒՆ ՈՒ «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ»

Հ Ա Ն Ի Ա Գ ՈՒ Մ Ա Բ Ը

Այժմ տեսնենք, թե ով և ինչպես էր փաստորեն իրականացնում գյուղացիական շարժումը ղեկավարելը և ինչ չափով հաջողվում էր կապել իրար հետ հեղափոխության յերկու հոռանքները — բանվորական հեղափոխությունը ու «գյուղացիական պատերազմը»:

Առանձին ղեպքերում սոցիալ-դեմոկրատները (ավելի հաճախ բոլշևիկները) դառնում էյին գյուղացիական մասսայական շարժման անմիջական ղեկավարները, մանավանդ Ուկրայինայում, Մերձբալտյան շրջանում, Լեհաստանում և Անդրկովկասում: Մի ժամանակ բոլշևիկները շատ ամուր կապեր ունեյին նաև կենտրոնական Ռուսաստանում:

Վորովհետև, յեթե զրկվենք դասակարգային ուժերի այդ առանձնահատուկ բարենպաստ դասավորումից այլևս չի լինի սոցիալիստական հեղափոխության ծավալման ամբողջ հիմքը մեր յերկրում»:

Ի՞նչ է ընկ. Բուխարինի այս պնդումների իմաստը: Անշուշտ, այն, վոր կուսակցությունը չպետք է գրոհ տա գյուղի կապիտալիստական տարրերի վրա, չպետք է արժատախիչ անի կապիտալիզմը գյուղում, չպետք է իրեն նպատակ դնի — վերջ տալ կուլակին, իբրև դասակարգի:

Շատ նշանակալից է, վոր աջերը իրենց դիրքը սոցիալիզմի շինարարության շրջանում կապում են Մարքսի-Լենինի տեսության հետ պրոլետարական հեղափոխության կապակցության մասին գյուղացիական պատերազմի հետ ընդդեմ ճորտատիրության, այսինքն — բուրժուական հեղափոխության շրջանում: Պրոլետարական հեղափոխության ու գյուղացիական պատերազմի կապակցության անհրաժեշտության անընդհատ հիշատակումը ներկա պայմաններում չի կարող չնշանակել հեղափոխությունը բուրժուական-դեմոկրատական շրջանակով սահմանափակելու փորձեր: Աջերը հրավիրում են «ինչ գնով էլ լինի» պահպանել դաշ-

տանում ու Վոլգայի շրջանում: 1905 թ. ստեղծվեցին «շրջանային» կազմակերպություններ Մոսկվայում, Վորոնեժում, Կազանում, Սամարայում և այլ տեղերում:

«Սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքի ձևերը գյուղում չափազանց այլազան էին — գրում է Ա. Շեստակովը, — այդ շրջանի «գյուղականներից» մեկը. — այսպես, կենտրոնական նահանգների գյուղերում գոյություն ունեյին գլխավորապես «հենակետեր», այսինքն՝ առանձին գյուղացիներ, հաճախ բանվորներից կամ քաղաքի բանվորների հետ կապ ունեցողներից, վորոնց ուղարկվում էր անլեզու գրականություն — տարածելու համար: Ավելի սակավ դեպքերում կենտրոնական-սևահող նահանգներում հաջողվում էր կազմակերպել խմբակներ քաղաքական գրույցների ու հետագա կազմակերպչական աշխատանքի համար տվյալ գյուղում կամ մի քանի գյուղերի շրջանում: Սոցիալ-դեմոկրատիայի հենց այս գյուղական բջիջները 1906 թ. մասնակցում էին Պետական Դումայի ընտրություններին ու այդպիսով կուսակցությունն այն ժամանակվա քաղաքական որգաններն էին գյուղում»:

նակցությունը ամբողջ գյուղացիության հետ (դա ըզխում է պրոլետարական հեղափոխության ու գյուղացիական պատերազմի կապակցության լողունգից):

Իսկ կենինը կապում էր սոցիալիստական հեղափոխությունը գյուղացիության շերտավորման հետ, նրա հետ, վոր «հեղափոխությունից կպոկվեն ունևոր, շահագործող դասակարգերը»: Աջ թեքումավորները, չհասկանալով կուսակցության այս գլխավորագյուն խնդիրը, հակառակ են ուժեղ գրոհ կուլակի դեմ սկսելուն, թեպետ և (խոսքերով) պատրաստ են «ընդունելու» այդ գրոհի անհրաժեշտությունը: Ոպորտունիստական տեսությունը անխուսափելիորեն առաջ է բերում ոպորտունիստական սխալներ գործնականում: Այդ աջ-ոպորտունիստական սխալների պատմական արմատները առանձնապես պարզ են դառնում, ինչպես տեսնում ենք, բոյլշևիզմի ստրատեգիա-տակտիկական պլանները զանազան շրջաններում ուսումնասիրելիս, — մասնավորապես — 1905 — 7 թ. հեղափոխության շրջանում:

Մի քանի նահանգներում (որինակ, Սարատովի, Տամբովի) կուսակցություն կենտրոններին կից գոյություն ունեյին հատուկ որգաններ գյուղացիությունն մեջ աշխատելու համար, «գյուղական աշխատանքի» բաժիններին նման մի բան, այսպես կոչված «հողային կուլեգիաներ», «հողային լիգաներ» և գյուղական կոմիտեներ:

Նույնիսկ լիբերալ-բուրժուական մամուլը ժամանակին ու վոչ առանց հիմքի մատնանշում էր սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը գյուղատնտեսական բանվորների և ամբողջ գյուղացիության շարժման վրա այնպիսի նահանգներում, ինչպես Տվերի և ուրիշները: «Սոցիալ-դեմոկրատները մեծ համակրանք են վայելում — գրում էր կադետական «Ռուսսկիյե Վեդոմոստի» թերթը: Նրանք գրեթե ամեն որ զանազան տեղերում սարքում են միտինգներ, արտասանում ճառեր... Պերվինյան գյուղաշրջանում իշխանության գոյությունը բացասվում է ամբողջությամբ ու բացահայտորեն: Զեմսկիյ նաչալնիկի իշխանությունը գոյություն չունի, համայնական վորոշումների հիման վրա (յերեսուն համայնք) տեղահան են արվում գյուղական ու գյուղաշրջանային իշխանությունները: Բոլոր գործերը վարում են գյուղացիության ընտրած պատգամավորները. գյուղաշրջանի գործերը վարում է կոմիտեն: Հարկերից հավաքվում են միայն ապահովագրական վճարումները: Միտինգները վերջանում են յերթերով — կարմիր դրոշակներով ու հեղափոխական յերգերով:

Գյուղական կուսակցական բջիջները նկատելի ակտիվություն էին արտաբերում Ուկրայինայում, ուր նրանց հաջողվում էր առաջ բերել նորակոչներ (ուելրուտներ) տալու մասսայական հրաժարում և ղեկավարել բատրակների գործադուլները: Ակտիվություն նկատվում էր նաև հյուսիս-արևմտյան շրջանում: Սակայն առանձնապես ուժեղ էր բոյլշևիզմի մասնակցությունը գուբրիական ապստամ-

բության մեջ (Կովկասում) և գյուղատնտեսական գործադուլների մեջ Լեհաստանում:

Պրոլետարիատի ղեկավարութունը գտավ, անշուշտ, իրա արտահայտութունը գյուղացիական պայքարի բնույթի ու մեթոդների մեջ: Չի կարող ուշադրության չարժանանալ և այն փաստը, վոր գյուղացիական խոշոր շարժումները ծավալվում էին սովորաբար բանվորական հեղափոխության պրոթիուսներից անմիջապես հետո: Այսպես, որինակ, 1905 թվի գարնան գյուղացիական շարժումը կապված էր բանվորական գործադուլային շարժման հունվար-փետրվարյան (Կարմիր կամ Արյունոտ Կիրակիներից հետո) ալիքների հետ: Նույն թվի աշնան գյուղացիական շարժումը կապված էր հոկտեմբերյան յերկաթուղային ու ընդհանուր գործադուլի հետ, իսկ 1906 թ. գարնան ու ամառվա շարժումը — Մոսկվայի գեկտեմբերյան զինված ապստամբության հետ:

Ուշադրությամբ գննելով գյուղացիական շարժման առաջնորդների «ֆիզիոնոմիան», մենք շատ հաճախ տեսնում ենք նրանց թվում քաղաքի բանվորներ, վոր գյուղ են յեկել դործագուլի պատճառով ձեռնարկության առժամանակ փակվելու հետևանքով, կամ քաղաքում ժամանակավոր աշխատանքից տուն վերադարձած ու քաղաքում պրոպագանդի յենթարկված գյուղացիներ: Որինակ, Միմբիրսկի նահանգից իրենք իշխանութունները ղեկուցում էին, վոր «թուղսիկներ տարածողները գլխավորապես իրենք գյուղացիներն են, վոր վերադառնում են ժամանակավոր աշխատանքներից Սամարայում ու այլ Մերձ-Վոլգայի քաղաքներում»: Որլովսկի նահանգի Կարաչևի գավառում հանքերից վերադարձող բանվորները զրգում են հետևել գործարանային բանվորների որինակին՝ «քեցեք կառավարիչներին — ասում են նրանք — ու ինքներդ բռնեցեք նրանց տեղը, տեղահան արեք բանվորներին»:

Կիսաբանվորների-կիսագյուղացիների ազդեցության տակ գյուղական ժողովները հաճախ վորոշումներ էին կայացնում, պահանջելով արմատական տնտեսական բարենորոգումներ քաղաքում:

Ահա, որինակ, Տվերի նահանգի Նովոտորժսկի գավառի գյուղաշրջաններից մեկի միաձայն ընդունված բանաձևը՝ «Պաշտպանելով բանվոր դասակարգը, իբրև մեր յեղբայրներին, իբրև ժողովրդի իրավունքի համար մարտնչող դասակարգի, նրա հետ միասին պահանջում ենք Տ-ժամյա աշխատանքի որ բոլոր գործարանային ու արդյունաբերական ձեռնարկութուններում, գործադուլների ազատութուն, այլև բանվորների պետական ապահովագրում դժբախտ դեպքերից, հիվանդութուններից ու մահից»:

Բացառապես բանվորական հեղափոխության ազդեցության տակ՝ առաջ յեկան 1905 թվին գյուղացիական պատգամավորների խորհուրդները — նույն Տվերի նահանգում, այլև Ռոստովի ու Նովոռոսսիյսկի շրջակա գյուղերում:

«Տվերի նահանգում — գրում է 1905 թվի բանվորական խորհուրդների պատմագիր Պ. Գորինը, — գյուղացիական խորհուրդների կազմակերպութունը կատարվում էր Ռ-Ս-Ի-Կ Տվերի Կոմիտեյի մոտիկ մասնակցությամբ. կոմիտեն կազմակերպում էր գյուղերում մի շարք միտինգներ, վորոնցից հետո կատարվում էին խորհրդի ընտրութուններ»:

Սկզբում խորհրդի անելիքները ձևակերպվում էին, իբրև չքավոր գյուղացիության պայքարը ղեկավարող ու գյուղաշրջանի բոլոր գործերը վարող մի կազմակերպության անելիքներ: Սակայն, գյուղաշրջանային համագումարավելի ևս ընդլայնեց այդ խնդիրները: Գյուղացիական պատգամավորների խորհուրդը վորոշեց վերցնել ամբողջ գյուղա-

շրջանի գյուղացիական շարժման ղեկավարությունը իր ձեռքը: Հենց այստեղ ել պատգամավորները բոյկոտ հայտարարեցին ցարական ադմինիստրացիային ու կոչ արին ազգաբնակչությանը — բոլոր գործերով դիմել Խորհրդին: Խորհուրդը դառնում էր գյուղում իշխանություն» — նկատում է ընկ. Գորինը:

Հաշվի առնելով սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը գյուղում առաջին հեղափոխության շրջանում, պետք է, սակայն, ասել, վոր թեև սոցիալ-դեմոկրատիան 1905 — 7 թ. ուներ գյուղում հաճախ նույնիսկ խիստ ամուր կապեր ու արմատներ, բայց և այնպես նրա աշխատանքը գյուղացիության մեջ, բացի Մերձբալտյան շրջանից ու Անդրկովկասից, զգալի չափերով յետ էր մնում քաղաքի հեղափոխական շարժման թափից: Բանվոր դասակարգը ու նրա ավանգարդը — սոցիալ-դեմոկրատիան գյուղացիության միակ ղեկավարը չէին:

1905 թվին ինքը գյուղը, ինչպես արդեն ասացինք, միակերպ, միատեսակ չէր: Նա այդ շրջանում արդեն զգալի չափերով շերտավորված էր:

Հողագուրդի գյուղացիները կազմում էին ընդհանուր գյուղական ազգաբնակչության վոչ պակաս քան 25%-ը: Անցյալ դարի 1880-ական թվերի վերջերին ու 90-ական թվերի սկզբներին գյուղացիական տնտեսությունների 22%-ը ուներ իր ձեռքին բոլոր ձիերի 56,4%: գյուղացիական բոլոր տնտեսությունների 55,8%-ը կամ մեկ ձի ուներ, կամ բոլորովին չուներ: Այլ խոսքով, գյուղացիական տնտեսությունների քառորդը ուներ իր ձեռքին բոլոր ձիերի կեսից ավելին:

1896 ու 1900 թվերի ժամանակամիջոցում գյուղացիական տնտեսությունների թիվը ավելացավ և այդ ավելացումը գրեթե ամբողջովին ընկնում է գյուղի աղքատ մասի վրա. իսկ գյուղացիական ձիերի թիվը նույն ժամանակամիջոցի ընթացքում պակասեց — 1891 թվի սովի շնորհիվ: Սրանից պարզ է, վոր դեռ մինչև 1905 թիվը

գյուղացիության մեջ կատարվում էր յերկու բևեռների ձևակերպումը՝ մի կողմից — կուլակների, իսկ մյուս կողմից — ուսնչպարների:

Ինչ դեր էյին խաղում այդ բևեռները 1905 — 1907 թվերի գյուղացիական շարժման մեջ:

Այդ հարցին պատասխանելը այնքան էլ հեշտ չէ: Իհարկե, չքավորները գյուղացիության ամենից ավելի շահագործվող ու անբավական շերտն էյին կազմում: Սակայն, կասկածից դուրս է և այն, վոր ճորտատեր-կալվածատիրոջ իշխանությունը մոտ չէր և գյուղի ունևոր շերտերի սրտին:

«Հաճարի արտահանության մեջ — գրում է Ա. Շեստակովը, բնութագրելով կենտրոնական շրջանը — մրցում կար կալվածատերերի ու գյուղացիության ունևոր շերտերի միջև. կալվածատերերը իրենց «ոտրաբոսկաների» սխառմով իջեցնում էյին գները շուկայում և միևնույն ժամանակ հնարավորություն չէյին տալիս ունևոր գյուղացիությանը լայնացնել իրենց տնտեսությունը, շնորհիվ հողի պակասությանը, վորը գտնվում էր կալվածատերերի ձեռքին: Հաճարի ցած գները իջեցնում էյին ունևոր գյուղացիների տնտեսությունը: Այդպիսով, կենտրոնական Ռուսաստանի գյուղացիության այդ մասը տրամադիր էր հեղափոխությանը հարելու, այլ պատճառներով, իհարկե, քան չունևորները»:

Հաճախ ունևոր գյուղացիները շարժման գլուխ էյին անցնում: 1905 թվի գարնանը Պոդոլսկիյ նահանգում, ուր ծավալվել էր գործադուլային շարժումը, «ղեկավարները — ըստ Մասլովի — ավելի ունևոր գյուղացիներն էյին. ավելի յերկյուղոտ էյին հողագուրդները, վորովհետև նրանք չեն կարող ապրել առանց ամենորյա վաստակի ու ստիպված էյին շատ շուտով վերջ տալ գործադուլին, խուսափելով սովից: Փորձեր յեղան ունևորներից չքավորների համար մթերք հավաքելու, բայց դրան խանգարեցին յեկած գործերը»:

Պարզ է, վոր վոչ միայն քաղաքից յեկած բանվորները, այլև «խողոպտիկ-մոլոխիչոկները» գյուղացիական շարժման ղեկավարներն էին: Այդ հաստատում է I ու II Պետական Դումաների գյուղացիական պատգամավորների սոցիալական կազմը: Ավելի ևս լավ բնութագրում է ունեվորները դերը այսպես կոչված Գյուղացիական Միության ու նրա գլխավոր կուսակցության՝ սոցիալիստ-հեղափոխականների գործնեյությունը:

Գյուղացիական Միությունը ստեղծվեց 1905 թվի ամառը: Չքավոր գյուղացիությունը թեպետ և ներկայացված էր այդ Միության համագումարներում, սակայն փոքրամասնություն էր կազմում: Վճռական ձայնը պատկանում էր «տնտեսատեր մոլոխիկին»: Այդ նա յեր, վոր էսեր Ֆունդամինսկու բերանով Միության I համագումարում (1905 թ. հուլիսի 31 — ոգոստոսի 3) խնդրում է «չդատապարտել կալվածատերերին կարիքի ու սովի, չզրկել նրանց վորոշ քանակ հողից (մինչև 50 դեսյատին) ու տալ նրանց, բացի դրանից, կենսաթոշակ»: Այդ նա յեր առաջարկում վերցնել հողը մասնավոր սեփականատերերից «մասամբ վարձատրությամբ, մասամբ առանց վարձատրության» ու հարցի լուծումը հետաձգում էր «մինչև Սահմանադիր ժողովը»:

Բնորոշ է և այն, վոր պատգամավորները\* զանց էին առնում հարցը ցարի մասին. սոցիալ-դեմոկրատների առաջարկը հանրապետության մասին մերժվեց ձայների մեծամասնությամբ: «Եսերները — նկատում է ընկ. Շեստակովը — և նրա հետ մեկտեղ պնդում էին գյուղացիական պատգամավորների աջ մասը, թե գյուղացիական մասսան ղեռնա չի հասունացել այդպիսի լոզունգների համար, հարցի այդորի-

\* Գյուղացիական Միության Համառուսական I Համագումարին ներկա էին մոտ 100 պատգամավորներ 22 նահանգներից:

նակ վճռական դրույթի համար, վորպեսզի որակարգի մեջ մտցնե հեղափոխության խնդիրը»:

Վոչ ավելի լավ, յեթե վոչ ավելի վատ, պահում էին իրենց եսերները և Գյուղացիական Միության մյուս առաջնորդները (մասամբ կադետները, մասամբ անկուսակցական մտավորականները) Միության II-րդ Համագումարում (1905 թվի նոյեմբերի 6 — 10):

Համագումարում նշմարվեց յերկու ուղղություն՝ մեկը — խաղաղ, վոր գերակշռողն էր, մյուսը — վոչ խաղաղ, վոր ներկայացված էր գլխավորապես հանձինս Սարատովի նահանգի պատգամավորների, ուր այն ժամանակ ծավալված էր ուժեղ գյուղացիական շարժում:

Համագումարի բանաձևում վոչ մի խոսք չկա զինված ապստամբության մասին: Համագումարը խորհուրդ է տալիս գյուղացիության, նախ... չգործածել վոգելից խմիչքներ և, ապա, ավելի լայն չափերով ոգտագործել Հոկտեմբերի 17-ի մանիֆեստի՝ ժողովրդին տված ազատությունները:

Միությունը նախորոք կոչ էր անում «հողային ընդհանուր գործադուլի» այն ղեպքում, յեթե կառավարությունը չգումարե Սահմանադիր ժողովը ձիշտ նշանակված ժամկետին — վոչ ուշ, քան 1906 թվի փետրվարին:

Համագումարը, եսերա-կադետական մտավորականության ղեկավարությամբ, այս դատարկ սպառնալիքից դենը չանցավ, թեպետ և նրա աշխատանքը ընթանում էր շատ բարենպաստ պայմաններում և բևեռած էր իր վրա հեղափոխական գյուղացիության ուշադրությունը\*:

Բնորոշ է և այն, վոր Համագումարի ղեկավարները հրաժարվում են բոյլճեիկների ներկայացուցչին վճռական ձայնի իրավունք տալուց և համաձայնեցին թողնել նրան լոկ խորհրդակցական ձայնի իրավունքով:

\* Գյուղացիական Միության Համառուսական II-րդ Համագումարին մասնակցում էին 187 պատգամավորներ 27 նահանգներից:

2-րդ համագումարից հետո սկսվում է Գյուղացիական Միության հոգևարքը: Պետական զանազան տուրքերից հրաժարվելու ու կառավարութայանը ֆինանսական աջակցությունից զրկելու, I Պետական Դումայի բոյկոտ հայտարարելու կոչը — Միության կարապի յերգն էր: Դեռևս մինչև գյուղացիական հեղափոխութայան ջախջախումը Միությունը վերջ տվեց իր գոյությանը:

Միության նախկին ղեկավարների հետագա գործնեյությունը միանգամայն պարզեց այդ կազմակերպութայան կուլակային եյությունը: Ընդհակառակը, գյուղացիական խորհուրդների ըջիջները 1905 թվին, միությանը հակառակ, գյուղացիութայան աշխատավոր մասսաների կազմակերպութայան այն ձևն էր, վորը թույլ տվեց, առաջին հեղափոխութայան մեծ փորձի հիման վրա, ամրացնել բանվորների ու գյուղացիների միությունը և ապահովել հեղափոխութայան հաղթանակը:

Գյուղացիական հեղափոխութայան թուշանքագումարը լությունը բղխում էր իսկական, հաստատ պրոլետարական ղեկավարութայան բացակայությունից: Բանը նրանումը չէ, թե արդյոք զուգադիպվեցին իրար, ըստ ժամանակի, բանվորական ու գյուղացիական հեղափոխութայան ալիքները, թե վոչ: Ա. Շեստակովը, որինակ, մյուս պատմագիրներից տարբեր, փորձում է ապացուցել, թե 1905 թ. աշնանը տեղի ունեցավ հեղափոխութայան յերկու ալիքների զուգադիպումը: Այդ կարող է — հեղինակի խոսքով — «ծառայել շատ պայծառ որինակ քաղաքի ու գյուղի այն միությանը, վորի վրա Վ. Ի. Լենինը կառուցում էր իր յենթադրությունները բանվորների ու գյուղացիների հնարավոր հաղթանակի մասին կալվածատերերի ու բուրժուազիայի վրա»: Իրականում, սակայն, մենք ունեյինք գյուղացիական հեղափոխութայան անկասկած յետ մնալը բանվորականից: Բայց ամենագլխավորը այն է, վոր գյուղացիական շարժումը խոշոր չափերով ինքն իրեն էր թողնված

մանավանդ վոր բանվորները ևս այն ժամանակ դեռ նոր կազմակերպվում էյին ու չունեյին իրենց ամուր կուսակցությունը:

Բոյլշևիկական կուսակցությունը, իբրև մասսայական կուսակցություն, դեռ նոր կազմակերպվում, ձևակերպվում էր կուլի պրոցեսում և մշակում էր իր տեսութայան ու տակտիկայի հիմունքները:

Բանվորական պատգամավորների քաղաքային խորհուրդները իրանք ևս թույլ էյին տալիս կուպիտ քաղաքական սխալներ՝ մենշևիկների գերակշռող դերի շնորհիվ (նույն թվում և Պետերբուրգի խորհուրդը), և կամ ժամանակի սղության պատճառով չկարողացան կապվել գյուղացիական մասսայի հետ, վորովհետև բանվորական հեղափոխությունը քաղաքում ջախջախվեց ավելի առաջ, քան հասան գյուղացիական ռեզերվները:

Բանվորական ու գյուղացիական հեղափոխութայան այդ հենց իրարից կտրված, իրարից զատված լինելու մեջ է կայանում 1905 թվի հեղափոխութայան պարտութայան գլխավոր պատճառը: Գյուղացիական հեղափոխությունը ինքնուստինքյան, վորքան էլ բարձրանային նրա ալիքները, չէր կարող հաղթանակը տանել առանց բանվոր դասակարգի կազմակերպութայանը ու նրա կուսակցութայան ղեկավարութայանը: Հեղափոխութայան հաղթանակը հնարավոր էր միայն հեղափոխութայան յերկու հոսանքների ձուլման դեպքում բանվոր դասակարգի միասնական գերիշխանության տակ: «Իսկ վորովհետև ապրանքային արտադրությունը չի միացնում ու չի կենտրոնացնում գյուղացիությունը — գրում էր Լենինը, — այլ տարրալուծում ու բաժանում ենրան, ապա գյուղացիական հեղափոխությունը ըուրժուակական յերկրում իրագործելի յե միայն պրոլետարիատի ղեկավարությամը»:

1905 թվին հեղափոխութայան հաղթանակի այդ նախապայմանը գոյություն չունեեր: Այդ հենց պատճառով հեղափոխությունը տվեց համեմատաբար աննշան եֆֆեկտ:

Ճիշտ է, հեղափոխութիւնից հետո ունենոր գյուղացիութեան ձեռքը անցավ — ծանր պայմաններով — կալվածատիրական հողերի մի մասը, կառավարութիւնը ստիպված էր ուժեղացնել հողերի հատկացումը Սիբիրում՝ չքավոր ու միջակ գյուղացիների տեղափոխութեան համար, կալվածատերերը արին մի քանի զիջումներ կապալագների և այլ խնդիրներում, սակայն հեղափոխութեանից հետո յեւ «հողային հարցը» մնաց ինչպես և հեղափոխութեանից առաջ՝ իր ամբողջ սրութեամբ ու խորութեամբ: 1905 — 1907 թվերի հեղափոխութեանը չտապալեց միապետութեանը, չտապալեց ճորտատեր-կալվածատերերին:

Ցարական պոմիւխտրացիայի ու կալվածատերերի փորձը — բաց անելու «վերջին կլապանը» ու նոր հեղափոխութեան առաջն առնելու «տնտեսական մոլորիչովի» ոգնութեամբ, Ստոլըպինի հողային որենքների հիման վրա, վոր քանդում էին համայնքը ու ստեղծում գյուղում ամուր անհատական տնտեսութեաններ, խուտորներ ու «ոտրուներ», — չտվին այն արդյունքը, վոր սպասում էր միապետութեանը այդ ուժիւրմներից:

Դասակարգային հակասութեանները պայթեցնում էին հին կարգերը, վոր հիմնված էին ճորտատիրութեան մնացորդների վրա, և նախապատրաստում էին նոր հեղափոխութեանը ավելի արագ, քան կատարվում էր Ֆեոդալ-կալվածատերերի «վերածումը» յունկերների, կալվածատեր-բուրժուաների:

Նոր հեղափոխութեան էր պետք՝ բազմամիլիոն գյուղացիութեան ուսերից կալվածատիրական լուծը վերջնականապես թոթափելու համար:

Հոկտեմբերն էր պետք՝ սոցիալիստական հեղափոխութեան շրջանը բանալու ու միևնույն ժամանակ «անցողակի կերպով» (Լենին) բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեանը մինչև վերջը հասցնելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. «Ամբողջ հողը» — «ամբողջ ազատությունը» . . . . .	3
2. Փոքրկից առաջ . . . . .	12
3. Գյուղացիական շարժման խնդիրը դարձավ հերթական: 1905 թվի գարունը, ամառը ու աշունը . . . . .	17
4. Յերկուրդ ալիք — 1906 թիվը . . . . .	25
5. Գյուղացիական հեղափոխության հանգումը — 1907 թիվը . . . . .	29
6. Գյուղացիական հուզմունքների աշխարհագրությունը . . . . .	30
7. Գյուղացիական բուրժուական հեղափոխությունը . . . . .	33
8. «Ամենից առաջ՝ կարգ ու կանոն» — Աջերը, ոկյաբխսները, կադեսները . . . . .	43
9. «Սոցիալիզացիա»... առանց սոցիալիստի: Ենեսները, սրուդովիկները, էսերները . . . . .	48
10. Ռեսավրացիայի վսանգից ազատելու համար պետք է հեղափոխությունը հասցնել մինչև վերջ: Մենեվիկները հողի ազգայնացման դեմ են . . . . .	53
11. Պերմանենս հեղափոխության բեռիան: Տրոցկու դիրքը . . . . .	56
12. Գյուղացիությունը իբրեւ պրոլետարիատի դաւանակից: Պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան — բոլշեւիկների հիմնական յոզունգը դեմոկրատական հեղափոխության Երջանում . . . . .	60
13. Յերկու հոսանք — բանվորական հեղափոխություն ու «գյուղացիական պատերազմ»: Հանրագումարը . . . . .	71

# ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

## Պ Ա Ն Ա Ն Ջ Ե Ց Ե Ք

Լենին	— Գյուղացիության մասին . . . . .	160 էջ, 40 կոպ.
»	Պատերազմի մասին . . . . .	376 էջ, 95 »
»	Ինչ անել . . . . .	224 էջ, 65 »
»	Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ . . . . .	272 էջ, 70 »
Լենինի	պատգամները յերիսասարդության . . . . .	15 »
»	պատգամները ժողով. լուսավորութ. մասին . . . . .	20 »
ՍՏԱԼԻՆ	— Ազգային հարց . . . . .	1 ռ. 60 »
»	Գյուղացիական հարց . . . . .	50 »
»	Մեծ բեկման տարին . . . . .	5 »
»	Գլխապետությամբ հաջողությունների հետևանքով . . . . .	4 »
»	Ազգային հարցի շուրջը . . . . .	8 »
ՍՏՈՒԹՅԱՐՈՎ	— Դիպլոմատիկական մատերիալի վրա յեվ մեխանիսները . . . . .	1 ռ. 25 »
«ՍՏԱԼԻՆ»	— (հոդվածների ժող. ծննդ. 50-ամյակի առթիվ) . . . . .	50 »
«Պրոլետարական գրականության Ֆրոնտում»	(ժող.) . . . . .	1 ռ. 20 »




Երդե	— 1905 թիվը . . . . .	50 կոպ.
1905 թվի հեղափոխությունը	(ժողովածու) . . . . .	90 »
Ֆլեբովսկի	— Մեր առաջին բանվ.-գյուղ. հեղափոխությունը 1905 թ. . . . .	70 »
Երդե	— 1905—7 թ. ք. գյուղացիական պատերազմը (հեղափոխությունը) . . . . .	60 »
Կարիյան	— Անդրկովկասը 1905 թվին . . . . .	40 »
Բրվալով	— Պատմական վրա (գեղարվ.) . . . . .	20 »

## ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

Տիմիրյազով — Դարվիներ յեվ նրա ուսմունքը . . . . . 18 մամուլ  
 Լուկին — Արեվսյան Յեվրոպայի նորագույն պատմությունը 35 »

Կենտ. պանեսում կա նայել կոլխոզային տարժման վերաբերյալ գրականությունը.

ՊԱՆԱՆՋԵՑԵՔ մեր գրացուցակը, վոր ուղարկվում է ձեր Դիմել՝ Москва, Никольская 10. Центриздат.



35 407.

О. П.

35168

Մ Ժ 1

801 0



---

Դ. ԶՐԴԷ

Կրօնական վոյնա  
(րեվոլյուցիա)  
1905—1907 ց. ց.

---

Ու արմանկոն յազմե

---

ՇԵՆՏՐԱԼՆՈՒ ԻԶԴԱՏԵԼՅՈՒ ՄՈՒԿԱԿՆԵՐՆԵՐՆԵՐՆԵՐ  
Մոսկվա, շենտր. Նիեոլսկայա, 10.

ՀՀ Ազգային գրադարան



NL0411183

